Լ. Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
1961

ԱՐԱՐԱՏ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

№ МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ 9

Л. В. МАРТИРОСЯН

ПОДВИГИ АРМЯНСКИХ ЖЕНЩИН НА ФРОНТАХ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1941—1945)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1961

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ | ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ | 9

396(47.925)

Լ. Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ (1941—1945)

Գ-ՀԱ
Հ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1961

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ

Աշխատության մեջ մեկնաբանված են Հայրենական Մեծ պատերազմում հայ ժողովրդի քաջարի զուստրերի կատարած սխրագործությունները։

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց ՍՍՌՄ-ի վրա նպատակ ունենալով ոչնչացնել աշխարհում առաջին Սովետական պետությունը, զավթել նրա անսպառ հարստությունները, սարկացնել սովետական ազատ ժողովուրդներին։

Հիտլերյան զավթիչները հույս ունեին «կայծակնային հարվածով» մեկ ու կես, երկու ամսվա ընթացքում ջախջախել Կարմիր Բանակի հիմնական ուժերը, ոչնչացնել Սովետական Միության արդյունաբերական կենտրոնները և ընկճել սովետական ժողովրդի դիմադրությունը։

Պատերազմի առաջին ամիսներին հիտլերյան բանակին հաջողվեց գրավել Լատվիան, Լիտվայի մի զգալի մասը, Արևմտյան Բելոռուսիան և Արևմտյան Ուկրաինայի մեծ մասը։ Կարմիր Բանակը հարկադրված եղավ նահանջել երկրի խորքը։

Լուրջ վտանգ կախվեց սոցիալիզմի երկրի վրա։ Սովետական բազմազգ ժողովուրդը, համախմբված Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության շուրջը, ստիպված եղավ պաշտպանելու իր սոցիալիստական հայրենիքը։

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ երկրի բոլոր ուժերը, միջոցները ի սպաս դրվեցին թշնամուն ջախջախելու, մեր Հայրենիքի ազատությունն ու անկախությունը պաշտպանելու գործին։

Սովետական Զինված Ուժերի քաջարի մարտիկները Հայրենական Մեծ պատերազմի տեղի մարտերում հայրենասիրության, հերոսության, անձնազոհության և ռազմական բարձր վարպետության հրաշալի օրինակներ ցուցաբերեցին: Անմոռանալի են Սովետական Միության հերոսներ՝ Նիկոլայ Գաստելլոյի, Ալեքսանդր Մատրոսովի, Ալեքսեյ Մերեսևի, Սովետական Միության եռակի հերոսներ՝ Իվան Կոժեդուբի, Ալեքսանդր Պոկրիշկինի, Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի, Սովետական Միության հերոսներ՝ Հունան Ավետիսյանի, Միլիտոն Կանտարիայի, Մեհդի Հյուսեյնովի և տասնյակ հազարավոր այլ մարտիկների անձնուրաց սխրագործությունները:

Սովետական ժողովրդի ազատության և անկախության համար մղվող պայքարում իրենց հերոս եղբայրներից, ամուսիններից, հայրերից ու որդիներից ետ չմնացին սովետական կանայք: Նրանք ոչ միայն թիկունքում՝ արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարական կազմակերպություններում, տրանսպորտում, կոլտնտեսություններում, ՄՏ կայաններում և սովխոզներում փոխարինեցին տղամարդկանց, այլև համալրեցին Կարմիր Բանակի շարքերը:

Հազարավոր բանվորուհիներ, կոլտնտեսուհիներ, ուսանողուհիներ, ինտելիգենցիայի ներկայացուցիչներ կամավոր մեկնեցին առաջնագիծ և մատնչեցին ֆաշիստական օկուպանտների դեմ՝ որպես տանկիստներ, կապավորներ, հրետանավորներ, օդաչուներ, բժշկա-սանիտարական աշխատողներ:

Սովետական ժողովրդի արիասիրտ դուստրերը հերոսության, անձնազոհության անկրկնելի օրինակներ ցուցաբերեցին Մոսկվայի, Լենինգրադի, Օդեսայի, Սեվաստոպոլի, Ստալինգրադի, Կովկասի համար մղված մարտերում: Հայրենական Մեծ պատերազմի

հերոսական տարեգրության մեջ առհավետ արձանագրվեցին շատ հերոսուհիների անունները, որոնք իրենց խիզախագործությունները անմահ փառք բերեցին սովետական կնոջը։

Սովետական կառավարությունը, բարձր գնահատելով կանանց ծառայությունները Հայրենական պատերազմում, 70 հայրենասեր կանանց արժանացրել է Սովետական Միության Հերոսի բարձր կոչման։

Ավելի քան 120 հազար կանայք պարգևատրվել են Հայրենական պատերազմի շքանշաններով ու մեդալներով, 8 հազար կին պարգևատրված է «Հայրենական պատերազմի պարտիզանին» մեդալով։ Հարյուր հազարավոր կանայք իրենց կրծքին կրում են հերոս քաղաքների պաշտպանության համար շնորհված մեդալներ։

* * *

1941 թ. աշնանը գերմանական բանակը, կանգ չառնելով իր կրած ծանր կորուստների առաջ, հասավ Մոսկվայի մատույցներին։ Այստեղ էլ Կարմիր Բանակը գերմանական զավթիչներին ջախջախիչ հարված հասցրեց՝ հողմացրիվ անելով «կայծակնային պատերազմի» հիտլերյան խելացնոր պլանը։

Մոսկվայի տակ մղած դաժան մարտերում իրենց եղբայրների հետ կողք-կողքի կռվում էին նաև սովետական կանայք։

Արիասիրտ կոմերիտուհի, Սովետական Միության Հերոս Զոյա Կոսմոդեմյանսկայան, 1941 թվականի դեկտեմբերին անցնելով թշնամու թիկունքը՝ Վերեյա քաղաքի մոտ, Պետրիշչևո գյուղում կրակեց թշնամու դաշտային հեռախոսի բոլոր լարերը, հրդեհեց հակառակորդի զորամասի ձիանոցը։ Մի օր անց ռազմական մի ուրիշ կարևոր օբյեկտի ոչնչացման պահին, նա բռնվեց։

Գերմանական ֆաշիստները 18-ամյա կոմերիտուհուն ենթարկեցին անասելի խոշտանգումների, բայց չկարողացան կոտրել նրա կամքը: Նա իր տանջալից մահը դիմավորեց հերոսաբար և մինչև վերջին շունչը հավատարիմ մնաց Հայրենիքին:

Զոյայի անմոռանալի սխրագործության ու նրա եղեռնական ապանության լուրը կայծակի արագությամբ տարածվեց լայնածավալ երկրով մեկ. այն է՛լ ավելի բորբոքեց հայրենասիրական պաթոսը՝ լուռն առնելությունն առաջ բերելով դեպի թշնամին:

Սովետական երիտասարդության համար դյուցազն հերոսուհի Զոյա Կոսմոդեմյանսկայայի լուսապայծառ կերպարը դարձավ հայրենասեր և անվախ պարտիզանուհու հրաշալի օրինակ:

Մոսկվայի տակ մղվող արյունահեղ կռիվներում, շատերի հետ մարտնչեցին կոմերիտուհիներ՝ Նատաշա Կովշովան և Մաշա Պոլիվանովան, որոնք 1941 թվականին կամավոր մեկնել էին ռազմաճակատ: Նրանք երկուսն էլ հերոսաբար զոհվեցին մայրաքաղաքի համար մղվող մարտերում և հետմահու արժանացան Սովետական Միության Հերոսի բարձր կոչման:

Սևաստոպոլի պաշտպանության ժամանակ, քաղաքի մատույցներում աչքի ընկավ հմուտ գնդացրորդ սերժանտ Նինա Օնիլովան, որը գնդացրային իր հաշվարկով ոչնչացրեց տասնյակ հիտլերականների և մինչև վերջին շունչը չհեռացավ գնդացրից:

Հայրենական պատերազմի կատաղի մարտերում՝ խիզախ օդաչուների շարքերում, մարտնչում էին նաև բազմաթիվ կանայք: Կին օդաչուներից բաղկացած գվարդիական Կարմրադրոշ Թամանյան ավիադիվիզիան հրամանատար, Սովետական Միության Հերոս՝ Մարիա Ռասկովան, իր օդաչուների հետ միասին, պատերազմի առաջին օրերից ջախջախիչ հարվածներ էր հասցնում թշ-

նամուն: Նա մարտերից մեկում էլ ընկավ հերոսի մահով:

Համկ(բ)Պ Կենտկոմի և Մոսկվայի կոմիտեի քարտուղար Ա. Ս. Շչերբակովը Կարմիր հրապարակում, Ռասկովայի թաղման ոգո միտինգում ասաց. «Մարիա Ռասկովան ժողովրդի հավատարիմ դուստրն էր, Սովետական երկրի հայրենասիրուհին: Նրա կյանքի ամեն մի քայլը, նրա բոլոր ձգտումներն ու խոհերը ուղղված էին մի նպատակի՝ ամրապնդել սոցիալիստական Հայրենիքի պաշտպանությունը: Որպես օդաչու, նա գիտեր, թե թշնամու դեմ մղվող պայքարում ինչպիսի ուժեղ զենք է ավիացիան, ուստի աշխատում էր անձնվիրաբար կատարելագործել այդ հուժկու զենքը»[1]:

Անվախ օդաչու էր նաև Եվդոկիա Նիկուլինան, որը պատերազմի ընթացքում կատարել է 600 մարտական թռիչք և թշնամու վրա նետել 120 հազար կիլոգրամից ավելի ավիառումբ: Իր ցուցաբերած մարտական սխրագործությունների համար նա արժանացել է Սովետական Միության Հերոսի պատվավոր կոչման:

Հարավային ռազմաճակատի, Կովկասի և Թամանյան թերակղզու համար մղվող մարտերում աչքի ընկավ ուկրաինական ժողովրդի պանծալի դուստր, գվարդիայի մայոր Մարիա Մարտինենկոն: Նա չորս անգամ վիրավորվել է, բայց ամեն անգամ առողջանալուց հետո վերադարձել զորամաս: Մարտինենկոն պարգևատրվել է «Կարմիր Դրոշ»-ի, «Հայրենական պատերազմի առաջին աստիճան»-ի, «Կարմիր Աստղ»-ի շքանշաններով ու «Խիզախության համար» մեդալով:

Լենինյան Կոմերիտմիության անդամ, ռազմաճակատում զոհված, անվեհեր Լյուբա Զեմսկայան թշնամու տանկերը ոչնչացնողի մեծ հռչակ էր ստացել: Մահվա-

---

[1] «Սովետական Հայաստան», 13 հունվարի 1943:

նից առաջ Հայրենիքին ուղղած նամակում նա գրել է.—

«...Իմ սիրելի մայր, միակն ամբողջ աշխարհում։ Դու դուրգուրել ես մեզ, փայփայել, նվիրել ես մեզ լավագույնը, դու ոչինչ չես խնայել մեզ համար։ Ձկա բարիք քո սիրուն հավասար, որով մեզ շրջապատում էիր մանկությունից... Ես քո դուստրն եմ... Եթե թշնամու արկը կտրի իմ ձեռքը, ես կկռվեմ մի ձեռքով։ Եթե ես զրկվեմ ոտքերից, սողալով կմոտենամ գազան ոհմակին և կհարվածեմ նրան նռնակով։ Եթե հանեն իմ աչքերը, ես թշնամուն կտեսնեմ սրտիս ատելության աչքերով և չե՞մ վրիպի»[1]։

Սովետական կանանց շարքերում, Հայրենական պատերազմի ռազմաճակատներում, ակտիվ կերպով պայքարել են Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների դուստրերը։

Ստալինգրադյան հերոսական էպոպեայի մասնակիցներից է վրաց ժողովրդի արժանավոր դուստր, գվարդիայի երկրորդ կարգի զինվորական բժիշկ Կլարա Խոջոլավան, որը կրակի մրրիկի տակ, արհամարհելով մահը, փրկեց հարյուրավոր ռազմիկների կյանք։

Ադրբեջանական ժողովրդի խիզախ դուստր՝ Սալիմա Խալիլովան, ռազմաճակատում իրենն դրսևորեց որպես արիասիրտ և հմուտ բժշկական քույր։ Նա պարգևատրվեց է «Կարմիր Աստղ» շքանշանով։ Գերմանական զավթիչների դեմ մղած պայքարում իրենց քույրերից ետ չմնացին նաև հայ կանայք։

Սովետական կարգերի հաստատումով, գարավոր ճնշումից ազատագրված հայ կինը Հայրենական Մեծ պատերազմում բարձր պահեց իր ազատատենչ ժողովրդի գարավոր պայքարի տրադիցիաները։

---

[1] Լ. Կարապետյան, Մեր Հայրենիքի փառապանծ դուստրերը, Հայպետհրատ, Երևան, 1948, էջ 3։

Անցյալում իրավազուրկ, հասարակական կյանքից դուրս մնացած հայ կինը, միայն սովետական կարգերի օրոք, Կոմունիստական պարտիայի ամենօրյա հոգատարության և օգնության շնորհիվ ձեռք բերեց իրավունքներ, դարձավ պետության կառավարման, սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակից: Նոր դարաշրջան բացվեց հայ կնոջ համար: Հայ կինը սկսեց ակտիվ կերպով աշխատել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում, դարձավ արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի, գիտության և լուսավորության բնագավառի առաջավոր աշխատող: Այդ պատճառով էլ նրա համար թանկ էր կորցնել ձեռք բերած ազատությունն ու իրավունքները: Ահա այդ էր պատճառը, որ հայ աշխատավորուհին պատերազմի հենց սկզբից լցված վառ հայրենասիրությամբ՝ ամենաակտիվ կերպով մասնակցեց հայրենիքի պաշտպանությանը ինչպես ռազմաճակատում, այնպես էլ թիկունքի աշխատանքներում:

Նրանք հայրենիքի պաշտպանության համար մղված մարտերում հանդես բերին բարձր գիտակցություն, հայրենասիրություն, քաջ իմանալով, որ պաշտպանելով Սովետական Միությունը արդարան հողը, պաշտպանում են Սովետական Հայաստանը, իրենց պատիվը և իրենց երեխաների գոյությունը: Սովետական Հայրենիքի նկատմամբ հայ կնոջ ունեցած անսահման սիրո մասին գեղեցիկ կերպով է արտահայտվել կամավոր ռազմաճակատ մեկնած Լենա Գրիգորյանը. «Իմ Հայրենիքը ծաղկուն Հայաստանն է, բայց իմ Հայրենիքը ոչ միայն Հայաստանն է, այլև ամբողջ Սովետական Միությունը: Ուզում եմ հաղար կյանք ունենալ, որպեսզի դրանք բոլորը նվիրեմ Սովետական Միությանը»[1]:

---

[1] «Պրավդա», 4 դեկտեմբերի 1943:

Հայ կինը պատմության մեջ շատ անգամ է հանդես եկել որպես ռազմիկ, Հայրենիքի պաշտպանների հավատարիմ օգնական ու մարտական զինակից։

Հայ ժողովրդի պատմության մեջ պահպանված են հայ կանանց հերոսությունների բազմաթիվ անմոռանալի օրինակներ։ Սակայն այնպիսի մասսայական մարտական հերոսություն ու անձնազոհություն, որպիսին ցուցաբերեցին հայ կանայք Հայրենական Մեծ պատերազմում, երբեք չի եղել։

1942 թ. ամռանը հակառակորդը ներխուժեց Հյուսիսային Կովկաս և Անդրկովկաս, ձգտելով տեր դառնալ Գրոզնու և Բաքվի նավթին, Վրաստանի և Հայաստանի հարստություններին, ստրկացնել Անդրկովկասի ժողովուրդներին։ Կովկասի դարպասների մոտ սովետական քաջարի զինվորները կատաղի մարտերով նա էին մղում թշնամու գրոհները, պաշտպանելով մեր Հայրենիքի յուրաքանչյուր թիզ հողը։

Հայ ժողովրդի պանծալի դուստրերը ակտիվորեն մասնակցեցին Կովկասի հերոսական պաշտպանությանը։

Այստեղ էր կռվում նաև Սոնյա Սինոյանը, որը պատերազմի հենց սկզբից, շատերի հետ միասին, կամավոր մեկնեց Կարմիր Բանակ։

Սինոյանը ծնվել է 1923 թ. Հայկական ՍՍՌ Թալինի շրջանի Վերին Աղջաղալա գյուղում (այժմ Բագմարերդ)։ Կրթությունն ստացել է գյուղի միջնակարգ դպրոցում։ 1939 թ. նա տեղափոխվում է Երևան և աշխատանքի անցնում կարի 1-ին գործարանում։

Նա իր աշխատասիրությանն շնորհիվ շուտով դառնում է առաջավոր բանվորուհի, ընդունվում կոմերիտմիության շարքերը։

1941 թվականի հոկտեմբերի 23-ին Երևանում հրավիրված համաքաղաքային կոմերիտական ընդհանուր ժողովին ներկա էր նաև Սոնյա Սինոյանը: Նա մեծ հուզմունքով էր լսում զեկուցող ընկերոջը, որը կոմսոմոլությանը կոչ էր անում խտացնել Կարմիր Բանակի շարքերը, անձնուրաց կերպով աշխատել թիկունքում՝ արտադրության մեջ:

Զեկուցումից հետո, առաջին ելույթի համար, անմիջապես խոսք է վերցնում Սինոյանը և հենց այդտեղ էլ կամավոր կերպով ռազմաճակատ մեկնելու դիմում է ներկայացնում. «Ես հպարտ եմ,— գրում է նա իր դիմումի մեջ,— որ պիտի մեկնեմ Կարմիր Բանակ և հարազատներիս հետ միասին կռվեմ հիտլերյան ավազակների դեմ: Թող գիտենան ֆաշիստ սրիկաները, որ սովետական կանայք պատրաստ են կրծքով պաշտպանելու մեր սիրելի Հայրենիքի ազատությունն ու անկախությունը»[1]:

Ելույթի վերջում նա կոչ է անում բոլոր կոմերիտականներին և կոմերիտուհիներին հետևելու իր օրինակին:

1942 թ. սկզբներին նա արդեն ռազմաճակատում էր: Սոնյան մասնակցում է Կիրովոգրադի մարզի Վերբլուշկա գյուղի, ապա Կովկասյան ռազմաճակատի Մոզդոկ քաղաքի համար մղվող պաշտպանական մարտերին:

Մոզդոկի տակ տեղի ունեցած մարտերին Սոնյան մասնակցում է որպես հրետանու կապավոր: Սինոյանը համարձակորեն մարտական գործողությունների մեջ մտնելով, աչքի է ընկնում որպես անձնազոհ, տոկուն և հրամանատարության առաջադրանքները ճշտորեն կատարող մարտիկ: Նա շուտով իրեն դրսևորում է նաև

[1] Հայրենական պատերազմի պատմության կաբինետի (այնուհետև ՀՊՊԿ) արխիվ, ֆ. 270, գ. 3, թ. 87:

որպես լավագույն հետախույզ։ 1942 թվականի դեկտեմբերին հրամանատարությունը մի խումբ մարտիկների, այդ թվում նաև Սոնյային, առաջադրանք է տալիս թափանցել թշնամու թիկունքը և ոչնչացնել նրա զենքի պահեստները։ Խնդիրը լուրջ էր, ուներ ռազմական մեծ նշանակություն, և մարտիկները երդվեցին կյանքի գնով կատարել այդ առաջադրանքը։

Գուրտ էր և շարունակ ձյուն էր տեղում։ Հետախույզները, քողարկվելով սպիտակ վերնազգեստներով, գիշերը մեկնում են առաջադրանքը կատարելու։ Մոտենալով թշնամու դիրքերին՝ նրանք հանդիպում են էլեկտրական խիտ լարափակոցների և ստիպված են լինում լարափակոցի տակով գետինը փորելով մտնել թշնամու թիկունքը։

Մարտիկները հասնելով նպատակակետին՝ բաժանվում են և տարբեր ուղղություններով աննկատելիորեն մոտենում զենքի պահեստին։ Ամեն մեկը գիտեր իր անելիքը։ Սոնյան ձյունապատ դաշտում մի պահ կորցնում է իրեն, շփոթվում։ Բայց դա տևում է մի քանի վայրկյան միայն։ Նա նկատում է ձյունապատ մի բլուր և հասկացնում, որ դա թշնամու դաշտային պահեստն է։ Մյուս կողմից բլրին են մոտենում նաև նրա ընկերները։ Պետք էր անհապաղ ոչնչացնել այն։ Սոնյան հանում է պայուսակից նռնակները և, ընկերներից հետ չմնալով, իրար հետևից նետում դեպի բլուրը։ Մի քանի վայրկյան հետո գետինը դղրդում է նռնակների ուժեղ պայթյունից, պահեստը հրդեհվում է։ Խնդիրը կատարված էր։

Երեկոյան դեմ բոլոր հետախույզներն անվնաս վերադառնում են զորամաս։ Հետախույզ մարտիկները, որոնց թվում և Սոնյան, հրամանատարության կողմից արժանանում են շնորհակալության և դերազանցիկ հետախույզի պատվավոր կոչման։

Գվարդիական Սոնյան 1944 թ. մասնակցում է Ուկրաինայի և Մոլդավիայի ազատագրմանը: Դիվիզիան, որի շարքերում ծառայում էր նա, գիրքավորվում էր Տարմազի և Շերպեն (Մոլդավիա) գյուղերի ուղղությամբ: Հրամանատարությունն այստեղ Սոնյային և ութ այլ հետախույզ մարտիկների խնդիր է տալիս պարզել թշնամու ուժերը, նրա դիրքերը, իմանալ կրակային կետերի տեղերը:

Հետախուզական խումբը երեկոյան դեմ ճանապարհ է ընկնում դեպի անտառ: Նրանք զգուշորեն շարժվում են միմյանցից որոշ հեռավորության վրա, տարբեր ուղղություններով: Մտնելով անտառ, մարտիկները զգուշորեն առաջ են շարժվում, նրանցից մեկը նկատում է գերմանացիներին: Ընդհարումն անխուսափելի էր: Հետախույզները փորող մտնում են թշնամու խմբին և շրջապատում նրանց: Կատաղի մարտ է սկսվում հետախույզների և ֆաշիստների խմբի միջև:

Կարճատև մարտից հետո հակառակորդն ամբողջովին անձնատուր է լինում, տալով երեք սպանված: Առաջադրանքը կատարելուց հետո հետախույզները ոչ մի զոհ չտալով, վերադառնում են զորամաս, իրենց հետ բերելով գերված վեց գերմանացի:

Մոլդավիայի ազատագրումից հետո, 1944 թ. վերջին նֆբրեյտոր Սինոյանը մասնակցում է Հունգարիայի ազատագրման մարտերին:

Հունգարիայում Սինոյանը նորից նշանակվում է հրետանային միավորման կապավոր: Նա այստեղ ևս հաջող է կատարում հրամանատարության առաջադրանքները:

Բելգրադյան հրաձգային № 1 դիվիզիայի № 1 հրետանային գունդը մի բարձունքում տեղավորել էր երկու հրետանային մարտկոց: ...Սպասվում էր կատաղի մարտ: Շուտով կապավորը գնդի հրամանատարին տեղեկացնում է թշնամու հարձակման մասին: Տրվում է

հրամանը. «Դիմադրել՝ և պահպանել դիրքերը մինչև վերջին արկը և ոչնչել օժանդակ ուժերին»։ Մարտի թեժ պահին թշնամու կրակից խափանվում է կապը գնդի հրամանատարության և մարտկոցների միջև։ Առաջ են շարժվում թշնամու տանկերը, իսկ նրանց հետևից ավտոմատավորները։ Դժվար էր այդ պահին կապը վերականգնել։ Մարտկոցի հրամանատարը նպատակ ունենալով փրկել զորամասում եղած միակ աղջկա՝ Սինոյանի կյանքը, խնդրում է զոհս դալ կրակային գծից, գնալ շտաբ։ Սակայն կապավորուհին հրաժարվում է պատասխանելով՝ «Ես կապրեմ, կամ կմնանեմ ձեզ հետ միասին» և մոտենալով հրետանավորների հաշվարկին, սկսում է արկեր մատակարարել։ Նա մինչև վերջ չի հեռանում իր մարտական ընկերներից ու մասնակցում է բարձունքի պաշտպանությանը։ Այդ մարտում կատարած սխրագործության համար նա արժանանում է «Կարմիր Աստղ» շքանշանի։ Հետագայում մասնակցելով բազմաթիվ մարտերի, Սոնյան նորից աչքի է ընկնում որպես քաջ մարտիկ։ Ուշադրավ է Դանուբի ափին, վերջին մարտերից մեկում նրա կատարած սխրագործությունը։

Այդ տեղի է ունենում Դյուլա գյուղի մոտ։ Հիտլերականները հակագրոհի էին դիմել. սկսվում է կատաղի մարտը. հարձակվող սովետական ռազմիկները զենքի բոլոր տեսակներից անընդհատ կրակ են տեղում թշնամու վրա։ Երկու կողմերի ուժերը մոտենում են միմյանց։ Հարձակվող մարտիկների շարքումն էր նաև գվարդիական եֆրեյտոր Սինոյանը։ Նա ավտոմատի կրակով կասեցնում է իր դիրքի ուղղությամբ շարժվող հիտլերականներին։ Բայց ահա գրոհի են անցնում գերմանական «Վագր» տիպի ութ տանկ։ Տանկերից մեկն ուղիղ շարժվում է դեպի Սինոյանը։ Երբ տանկը գտնվում էր 15 մետրի վրա, Սինոյանը նետում է հրկիզող շիշ, որը դիպչում է տանկի աշտարակին և հրկիզում այն։ Տանկի

Եֆրեյտոր Սոնյա Սինոյան



Զենիթային մարտկոցի հնաչափային
ջոկատի հրամանատար Համիկ Թումայան

անձնակազմը ոչնչանում է։ Սոնյան երկրորդ տանկի վրա նստում է հակատանկային 14 նռնակ, վերջին երկու նռնակը ուղիղ ընկնում է թրթուրների տակ և երկրորդ «Վագրը» մնխվում է տեղում։ Նա այդ մարտում, բացի 2 տանկից և նրանց անձնակազմից, ոչնչացնում է նաև հինգ հիտլերական, իսկ երկուսին գերի է վերցնում[1]։

Հրամանատարությունը Սինոյանին ներկայացնում է պարգևատրման։

Բազմաթիվ են խիզախ գվարդիական ինֆրելյոր Սոնյա Սինոյանի կատարած քաջագործությունները գերմանա-ֆաշիստական դավթիչների դեմ մղած մարտերում։ Պատերազմի ընթացքում նա պարգևատրվել է «Կարմիր Աստղ»-ի, «Փառքի 3-րդ աստիճանի» շքանշաններով և մի քանի մեդալներով։ Գերագույն Գլխավոր հրամանատարության կողմից Սինոյանը գրավոր շնորհակալության է արժանացել Սովետական Մոլդավիայի, Շումեն (Շումլա), Կոնստանցա, Բուդապեշտ քաղաքների ազատագրման, Կյոնիգսբերգ, Գլոգիդորֆ, Դեր և Կոմարոմ, Վիեննա, Գոլլարբրունն, Շտոկկերաու և մի շարք այլ քաղաքների համար մղված մարտերում աչքի ընկնելու համար։

Նրա կատարած անձնուրաց հայրենասիրական սխրագործությունները բարձր են գնահատվել նաև բանակի Հարավային խմբի հրամանատարության կողմից, որը Սինոյանի զորացրման կապակցությամբ նրան տրված հրամանում գրել է. «Այս պատմական ճակատամարտում դու պատվով կատարեցիր Կարմիր Բանակի ռազմիկի քո պարտականությունը։ Հարավային խմբի զորքերի կազմում դու անցել ես Դոնից և Ստալինգրադից մինչև Վիեննա և Ավստրիական Ալպերը տանող երկք հազար կիլոմետրանոց մարտական ճանապարհ, դու քաջու-

[1] Տես „Суворовский натиск", 9 марта 1945 г.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

թյամբ ու պատվով մասնակցել են հարազատ Ուկրաինայի ու Մոլդավիայի և միլիոնավոր սովետական քաղաքացիների ազատագրման համար դիմադրական գավթիչների դեմ մղվող մարտերին»[1]։

Պատերազմի հաղթանակից հետո մարտերում կոփված ռազմիկը վերադառնում է հայրենի Բաղմաբերդ գյուղը և ակտիվ կերպով մասնակցում կոլտնտեսության աշխատանքներին։

Սոնյան 1949 թ. տեղափոխվում է Երևան. մի քանի տարի է ինչ նա աշխատում է Երևանի առաջին ավտոբուսային պարկում։

Կովկասի ակտիվ պաշտպաններից է ՍՄԿՊ անդամ Հասմիկ Թամազյանը։ Նա ծնվել է 1922 թ. Հայկական ՍՍՌ Աշտարակի շրջանի Աշտարակ գյուղում։ 1940 թ. ավարտում է գյուղի միջնակարգ դպրոցը և աշխատանքի անցնում սկզբում խնայդրամարկղում որպես վերահսկիչ, իսկ հետո պետական որպես ավագ տեսուչ։ Հասմիկը, որպես լավագույն կոմերիտուհի, ընտրվում է շրջանային գործադիր կոմիտեի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար։

Հ. Թամազյանը Կովկասի հերոսական պաշտպանության օրերին կամավոր կերպով մեկնում է Կարմիր Բանակ, սովորում և դառնում զինիթալին հրետանավոր։ Նա գերազանց տիրապետելով հետաչափ գործիքին, արագորեն հայտնաբերում է հակառակորդի ինքնաթիռները, նրանց շարժման ուղղությունը և օգնում զինիթալիններին ժամանակին հարվածելու թշնամու ավիացիային։

1943 թ. սկզբներին Սրմալիր քաղաքի ազատագրման համար մղված համառ մարտերի ժամանակ, հիտ-

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 3, թ. 5։

լերականները ուժեղ կրակ են բացում մեր պաշտպանության դիրքերի վրա, նրանց ինքնաթիռներն անընդհատ օդ էին բարձրանում, ռմբակոծում և խանգարում մեր մարտիկների առաջխաղացմանը։

Ռազմա-օդային դիվիզիոնի հրամանատարը, հետաձգային ջոկի հրամանատար Հասմիկ Թամազյանին առաջադրանք է տալիս որոշել օդ բարձրացող թշնամու ինքնաթիռների ուղղությունը։ Հետաձգային ջոկը արագորեն ճշտում է ինքնաթիռների ուղղությունը և հայտնում հրամանատարությանը։ Երբ հակառակորդի ինքնաթիռները մոտենում են մեր պաշտպանության գծին, զենիթայիններն անմիջապես կրակ են բացում և ցրում թշնամու ինքնաթիռների խումբը, իսկ մի քանիսին ոչնչացնում, որի հետևանքով խափանվում է թշնամու ավիացիայի այդ օրվա հարձակումն Արմավիր և Կրասնոտկին քաղաքների վրա։

Հետաձգային ջոկի հրամանատար Թամազյանը և նրա մարտական ընկերուհիներ՝ ենթակայորդ Նինա Շկարուպինան, Սաշա Սաֆարովան, հետագա մարտերում նույնպես աչքի են ընկնում ուշիմությամբ, աչալրջությամբ. նրանք կարողանում են արագորեն որոշել հակառակորդի ինքնաթիռների ուղղությունը։

Հարավային Կովկասի ազատագրման համար մղվող մարտերում անձնուրաց սխրագործությունների համար Թամազյանը հրամանատարության կողմից երկու անգամ արժանանում է պատվոգրի[1] և պարգևատրվում «Մարտական ծառայությունների համար» մեդալով։ Պատվոգրերից մեկում գրված է. «Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմում հակաօդային պաշտպանության գործում հանդես բերած մարտական

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 55ա, թ. 1։

հաջողություններին և բարձր կարգապահության համար»[1] կրտսեր սերժանտ Հասմիկ Թամազյանին պարգևատրել պատվոգրով։

Փորձված ռազմիկ Թամազյանը մասնակցելով Ուկրաինայի, Բեսարաբիայի ազատագրմանը, մարտերով հասնում է մինչև Զեխոսլովակիա և մասնակցում նրա ազատագրմանը։ Նա գործող բանակում լավագույն զինթայլին լինելով, միևնույն ժամանակ գլխավորում է դիվիզիոնի պարտիական կազմակերպությունը և որպես պարտիական կազմակերպության քարտուղար իր ուժերը նվիրում է կոմունիստների քաղաքական դաստիարակության ու ստորաբաժանման մարտական առաջադրանքների կատարման գործին։

Հեռաչափային ստորաբաժանման հրամանատար, կապիտան Պալկովը և քաղգծով նրա տեղակալ մայոր Ժիլկինը ռազմաճակատից Թամազյանի հորը ուղարկած նամակում գրում են. «Սիրելի Գևորգ Հարությունի Թամազյան... Մեր ստորաբաժանման մեջ ծառայությունն անցկացնելիս, Ձեր դուստրը իրեն դրսևորեց որպես լավագույն աղջիկ-մարտիկներից մեկը։ Ամբողջ ծառայության ընթացքում նա եղել է մարտական ու քաղաքական պատրաստության կերպանցիկ, համեստ ու կարգապահ մարտիկ»[2]։

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո, շատերի հետ իր հայրենի օջախը վերադարձավ Հասմիկ Թամազյանը։ Ռազմաճակատում կռված մարտիկը 1947 թ. ընդունվեց Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմին առընթեր երկամյա պարտիական դպրոցը. ավարտելուց հետո անցավ աշխատանքի կաշվի դալանտերիայի ֆաբրիկայում որպես ինժեներ-տեխնոլոգ և ակտիվորեն պարտիական կազմակերպության քարտու-

[1] ՀՊՊԿ արխիվ, 270, գ. 55ա, թ. 1։

[2] Նույն տեղում, թ. 2։

գար, իր ուժերը նվիրելով խաղաղ ստեղծագործ աշխատանքի։ Այժմ նա աշխատում է Հայաստանի արհեստագործական կոոպերացիայի մանվածք արտելում, որպես նախագահի տեղակալ՝ կազմ-մասնայական և կադրերի գծով։

Կովկասը պաշտպանող մարտիկների շարքերում հերոսաբար պայքարում էին նաև մեծ թվով հայ կապավոր կանայք՝ կապի վաշտի հրամանատար Աղավնի Ավետիսյանը, ՀԱՄԼԿԵՄ անդամներ՝ կրտսեր լեյտենանտներ՝ Ինարիկ Հարությունյանը, «Կարմիր Աստղ»-ի շքանշանակիր Վիկտորիա Մալակյանը, «Մարտական ծառայության համար» մեդալակիրներ՝ Լյուսյա Պողոսյանը և Վալենտինա Լիվյանը. նրանք մարտերի ամենածանր պայմաններում, թշնամու ուժեղ կրակի տակ անխափան էին պահում զորամասի կապը։

Ռազմաճակատում անխափան կապ պահպանող կոմերիտուհի Վալենտինա Լիվյանի մասին հրամանատարությունը նրա պարգևաթերթիկում գրել է. «Ընկ. Լիվյանը ապահովում էր անխափան կապը գումարտակի և վաշտի միջև, մի քանի անգամ թշնամու կրակի տակ անց է կացրել հեռախոսալին գիծ։

1943 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին նա ծովային հետևակի 255-րդ կարմրադրոշ բրիգադայի 327-րդ առանձին գումարտակի կազմում մասնակցել է Նովորոսիյսկ քաղաքի մոտ «Փոքր հողի» վրա մղվող մարտերին։

Աշխատելով որպես կապավոր՝ ընկ. Լիվյանը մարտերի ժամանակ ապահովում էր գումարտակի հրամանատարական կետի և զորամասերի միջև պահպանվող կապը, սրանից բացի, մարտերի ծանր մոմենտներին նա մարտի դաշտից դուրս էր բերում վիրավորներին և նրանց ցույց տալիս բժշկական առաջին օգնություն»[1]։

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 370, գ. 90, թ. 1։

Կապի վաշտի հրամանատար Աղամալի Ավետիսյանը, թշնամու տեղատարածի կրակի տակ, միշտ անխախտ էր պահում կապը: Նա անձամբ նորոգում և վերականգնում էր խախտված հեռախոսային գիծը: Մի մարտի ժամանակ, թշնամու ուժեղ կրակի տակ, Աղամալին վերականգնում էր հեռախոսի գիծը, երբ ընկավ շրջապատման մեջ: Բայց նա դուրս եկավ շրջապատումից և անհապաղ ապահովեց կապը գորամասի հետ: Կապի վաշտի հրամանատար Աղամալի Ավետիսյանը իր անձնական օրինակով ոգեշնչում էր տարբերակման հրամանատարներին ու մարտիկներին:

Անվեհեր կապավորներից էր ՀՍՍՌ Լուսավորության մինիստրության նախկին աշխատակից, Երևանի Պետական համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետի առաջին դասընթացի ուսանողուհի, կամավոր ռազմաճակատ մեկնած կրտսեր լեյտենանտ Գոնարիկ Հարությունյանը, որը Կովկասից հասավ մինչև Բեռլին, և որպես խիզախ կապավոր, մարտի ծանր պայմաններում, օրինակելիորեն կատարեց իր վրա դրված մարտական բոլոր առաջադրանքները:

Հայրենական կոմունիստ կապավորուհին պարգևատրված է «Կարմիր Աստղ»-ի շքանշանով, «Մարտական ծառայությունների համար» և այլ մեդալներով: Լուսավորության մինիստրության կոլեգիան 1943 թ. մարտի 8-ին Հարությունյանին ուղղած նամակում գրել է. «Մենք ուրախանում և հպարտանում ենք քեզանով, որ դու հաղթահարելով սոսկալի տեսակ դժվարությունները, քո հոգու ամբողջ զորությամբ ու վեհությամբ պայքարում ես հաղթանակի համար, պատվով կատարում քո հայրենասիրական պարտքը մեր սրբազան Հայրենիքի հանդեպ: Մենք համոզված ենք, որ դու քո հոգու ամբողջ վեհությամբ, ուժերիդ բարձր լարումով, պատվով կկատարես քեզ հանձնարարված յու-

բաքանչյուր խնդիրը, քո համեստ ուժերով կնպաստես ֆաշիզմի ջախջախման և մեր սրբազան երկրի ազատագրման մեծ գործին։

Մեր սիրան անհուն բերկրանքով է լցվում, երբ թերթում ընթերցում ենք քո անունը»[1]։

Մարտական շքանշաններով պարգևատրված, կըրտսեր լեյտենանտ Ֆ. Հարությունյանը, Վ. Մալակյանը, Լ. Պողոսյանը մասնակցում են Կովկասի հերոսական պաշտպանությանը, Կերչի, Վորոնեժի, Պոլտավայի, Վարշավայի ազատագրման մարտերին և Բեռլինի գրավման հպարտական կռիվներին։ Պատերազմի ավարտից հետո Ֆնարիկ Հարությունյանը վերադառնում է Երևան։ Նա այժմ աշխատում է Երևանի Պետական բանկի Կիրովյան բաժանմունքում որպես ավագ վարկային տեսուչ։ Հարգված կոմունիստ Հարությունյանը արդեն մի քանի անգամ է, որ ընտրվում է պարտիական կազմակերպության քարտուղար։

* * *

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում կռվող հայ ժողովրդի անվախ դուստրերից մեկն էր կամավոր ռազմաճակատ մեկնած «Կարմիր Աստղ»-ի շքանշանակիր, 21-ամյա Նինա Մուրադյանը։ Նա զենքը ձեռքին մարտնչում էր թշնամու դեմ Կուբանի ազատագրման համար մղվող մարտերում։ Ռազմաճակատ մեկնելու պահին նա իր ծնողներին ասաց. «Ես գնում եմ ռազմաճակատ իմ եղբոր և ամուսնու արյան վրեժն առնելու»[2]։

Մուրադյանը Կարմիր Բանակի շարքերում մասնակցեց Կուբանի ազատագրման մի շարք մարտերին և հրաձգային վաշտի մարտիկների հետ իր դիպուկ կրակով ոչնչացրեց մեծ թվով հիտլերականների։

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 57, թ. 1։

[2] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270 գ. 29, թ. 2։

Հայրենական պատերազմի բոլոր ռազմաճակատներում հայ ժողովրդի հերոս դուստրերը պաշտպանելով Հայրենիքը, չէին խնայում իրենց կյանքը: Նրանք բոլորն էլ մի բան էին ցանկանում՝ տեսնել վերադառնալ միայն հաղթանակով:

Կարմիր Բանակի շարքերում մարտնչող Լուսիկ Ջավաքյանը այդ մասին ռազմաճակատից հորը գրել է.

«...Հայրիկ, գրում ես, թե շա՞տ եմ մնալու Կարմիր Բանակում. կարող եմ պատասխանել, որ մինչև պատերազմի վերջը: Երբ պատերազմը վերջանա, մեր հաղթանակած բոլոր մարտիկների հետ կվերադառնա նաև քո աղջիկը, որը հայրենիքի համար այժմ ծառայում է Կարմիր Բանակի շարքերում:

Վատահ եղիր, Հայրենիքի պաշտպանության համար իմ արյան վերջին կաթիլն անգամ չեմ խնայի: Հայրիկ ջան, առնչի Հիտլերն իր ձեռքով փորել է իր գերեզմանը, հարձակվելով մեր երկրի վրա, որովհետև սովետական ժողովուրդը երբեք ծունկ չի չոքի նրա առաջ, նա կխորտակվի Կարմիր Բանակի հուժկու հարվածների տակ: Ինձ համար չմտածես: Ծառայում եմ Հայրենիքի պատվի համար»[1]:

1942 թ. ամռանը սովետական մարտիկները ծանր կռիվներ էին մղում Կուբանում, Տուապսե—Նովորոսիյսկ հատվածում: Այդ մարտերին ակտիվ մասնակցություն է ունենում Երևանի Կրասնոգվարդեյսկի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտ, 17-ամյա կոմերիտուհի, Հալկական 408-րդ դիվիզիայի բժշկա-սանիտարական գումարտակի բժշկական քույր, կրտսեր լեյտենանտ Արաքսյա Հարությունյանը: Նա Նովորոսիյսկի հատվածում մի քանի տասնյակ վիրավոր մարտիկներին ու հրամանատարներին բժշկական օգնություն էր ցույց տալիս: 1943 թ. սկզբներին, ամրակոծության ժամանակ, Արաքսյան վի-

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, փաստաթուղթ № 266:

բալորվում է։ Նրան տեղափոխում են հոսպիտալ։ Առողջանալուց հետո նա աշխատում է նույն հոսպիտալում որպես քույր։ Սակայն չբավարարվելով այդ աշխատանքով, Հարությունյանը ձգտում է դնալ առաջավոր գիծ և մարտական շարքերում կռվել թշնամու դեմ։ 1943 թ. վերջերին, բժշկական քույր Հարությունյանը ընդունվում է հրամանատարական դասընթացները, ավարտում այն, և ստանալով կրտսեր լեյտենանտի կոչում, մեկնում է ռազմաճակատ։

1945 թ. սկզբներին, երբ թշնամին արդեն դուրս էր շպրտված սովետական հողից, գվարդիական № դիվիզիայի № գումարտակի կոմերիտական կազմակերպության քարտուղար Արաքսյա Հարությունյանը մասնակցում է Զելենոգրադսկիայի Մորավսկա Օստրովա և Ժիլինա քաղաքների ազատագրմանը։ Ժիլինա քաղաքի ազատագրման համար ծավալված մարտերից մեկում ապանվում է ստորաբաժանման հրամանատարը։ Գումարտակի կոմերիտական կազմակերպության քարտուղար Հարությունյանը հրամանատարությունը վերցնում է իր ձեռքը։ Հարձակումն սկսելուց առաջ նա անց է կացնում կոմերիտական կարճատև ժողով, մարտիկներին բացատրում է առաջադրված խնդիրը և հետախուզելով թշնամու ուժերը, երեկոյան հարձակում է ձեռնարկում Ժիլինա քաղաքի գրավման համար կարևոր նշանակություն ունեցող բարձունքի վրա։ Նրա մարտիկները ոչնչացնում են թշնամուն և առաջ շարժվելով գրավում են նաև մի ուրիշ կարևոր բարձունք. հաջորդ օրը նրանք ետ են շպրտում թշնամու գրոհները և սովետական մյուս զորամասերի հետ միասին մասնակցում Ժիլինա քաղաքի ազատագրմանը։ Այդ քաղաքի ազատագրման ժամանակ ցուցաբերած խիզախության համար պարգևատրված մարտիկների շարքում Սովետական Միության Կոմունիստական պարտիայի անդամ, կրտսեր լեյտենանտ Հարությունյանն արժա-

նանում է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի» շքանշանի:

Կրոսեր լեյտենանտ Հարությունյանը մասնակցում է նաև Զնիպրոպետրովսկի մի շարք այլ քաղաքների՝ Օլոմուց, Բուգալին, Ֆրեյշտադտ, Սկոչուվ, Գաուչա, Ռուժոմբերոկ քաղաքների, ինչպես նաև Պրագայի ազատագրման համար մղված մարտերին:

* * *

1943 թ. վեստվարի 2-ին Ստալինգրադի ճակատամարտում մեր զորքերի տարած պատմական մեծ հաղթանակից հետո, Կարմիր Բանակի առաջնահերթ խնդիրը դարձավ վերջնականապես դուրս վռնդել թշնամուն Կովկասից և Ղրիմի թերակղզուց:

1943 թ. հոկտեմբերին թշնամին վերջնականապես դուրս վռնդվեց Կովկասի սահմաններից:

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի (հետագայում Մերձծովյան հատուկ բանակ) և Ուկրաինական 4-րդ ռազմաճակատի զորքերը համատեղ հարված հասցնելով թշնամուն, մտան Ղրիմ: Նոյեմբեր-դեկտեմբերին Թամանից դեպի Կերչի թերակղզին նետվեցին հետևակը, ավիացիան, տանկային միավորումները, սեծովյան ռազմանավերը:

Մուզակի մեջ ընկած թշնամին ջախջախվում էր մեր զորքերի հարվածների տակ:

Կերչի ազատագրման համար մղվող մարտերին Բազմա-օդային նավատորմի զորամասերի մարտաշարքերում մասնակցում էր նաև կանանց Կարմրադրոշ Թամանյան ավիացիոն գունդը՝ Սովետական Միության Հերոս Մարիա Ռասկովայի հրամանատարությամբ: Նույն գնդումն էր ծառայում նաև կամավոր ռազմաճակատ մեկնած հայ ժողովրդի քաջասիրտ դուստր, ավիատոր Ալեքսանդրա Օսմանցյան (Օսմանյանը): Նա սկզբում

աշխատում է որպես ավիացիոն մեխանիկ, ապա համատարին տիրապետելով թռիչքային բարդ տեխնիկային, դառնում է օդաչու և կատարում մարտական թռիչքներ։

Կոմերիտուհի օդաչուն առաջին մարտական մկրտությունն ստանում է 1943 թ. նոյեմբերին Կերչում մղված օդային մարտերում։ Կատարելով մարտական առաջադրանքները, նա մեծ կորուստ է պատճառում հակառակորդի կենդանի ուժին, տեխնիկային ու ռազմական օբյեկտներին։

Ալեքսեևա Օսմանցևան, խիզախ օդաչուներ՝ Մարինա Զեչենեայի, Իրինա Ռակոբոլսկայայի, Դալինա Պոնոմարենկոյի և Վալյա Տիխոմիրովայի հետ բազմաթիվ թռիչքներ է կատարում Դոնի, Մինսկ, Բյոնիդսբերդ և Բեռլին քաղաքների վրա։ Հրամանատարությունը բարձր գնահատելով օդաչու Օսմանցևայի մարտական ծառայությունները, նրա կուրծքը զարդարում է «Կարմիր Աստղ»-ի, «Հայրենական պատերազմի առաջին աստիճան»-ի շքանշաններով, Կովկասի պաշտպանության ու Բեռլինի գրավման համար մեդալներով։

Պատերազմի հաղթական ավարտից հետո, օդաչուն վերադառնալով իր ծննդավայրը՝ Ստավրոպոլ քաղաքը, շարունակում է կիսատ թողած ուսումը։ Նա ավարտում է միջնակարգ դպրոցը, մեկնում Երևան և ընդունվում Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի անասնաբուծական ֆակուլտետը և այն բարձր ցուցանիշներով ավարտում 1957—1958 ուսումնական տարում։ Այժմ նա աշխատում է որպես անասնաբույժ։

1943 թ. նոյեմբերի 3-ին Կերչի թերակղզու մատույցները իջած սովետական առաջին դեսանտային զորամասի կազմում էր գտնվում նաև Մոսկվայի տեխնոլոգիական ինստիտուտի առաջին կուրսի ուսանողուհի, չքնաղ Լյուսա դեսատը, Սոնյա Չիլինգարյանը։ Նա պա-

տերազմի սկզբին մեկնելով Կարմիր Բանակ, սովորում է հրամանատարական դպրոցում, ստանում լեյտենանտի կոչում և մեկնում ռազմաճակատ: Չիլինգարյանը նշանակվում է Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի 400-րդ գնդի գնդացրային առաջին դասակի հրամանատար:

Այդ օրվանից Չիլինգարյանը դիվիզիայի շարքերում իր դասակի հետ մասնակցում է բազմաթիվ մարտերի: Գնդացրորդուհին առանձնապես աչքի է ընկնում Թամանի և Կերչի ազատագրման մարտերում:

Դեսանտայիններին խնդիր է տրվում Կերչի թերակղզու մատույցներում ամրացնել իրենց գրաված դիրքերը, ճնշել թշնամու կրակը և հարձակվող հետևակի համար ճանապարհ բացել դեպի Կերչ քաղաքը: Առաջադրանքը բարդ էր ու դժվարին: Հակառակորդը լավագույն զորամասերով ամրացրել էր իր դիրքերը ու ստեղծել կրակային ուժեղ կետեր: Կոմերիտուհի Չիլինգարյանի հրամանատարությամբ գործող գնդացրային դասակին առաջադրանք է տրվում հակառակորդին դուրս շպրտել դեպի Կերչ տանող ճանապարհի վրա գտնվող Վոյկովի անվան մետալուրգիական գործարանի շրջակայքից: Այդ դժվարին գործի կատարումը լեյտենանտ Չիլինգարյանից պահանջում էր ռազմական հմտություն: Դասակը Չիլինգարյանի գլխավորությամբ շարժվում է դեպի գործարան և նետվում մարտի: Գործարանի կորպուսներից մեկում տեղի է ունենում կարճատև, բայց համառ կռիվ: Բաջարի հրամանատարը գնդացրային կրակով ոչնչացնում է հակառակորդի մի քանի կրակային կետեր և շարքից հանում շատ հիտլերականների: Թշնամուն դուրս մղելով գործարանից, գնդացրային դասակը ամրանում է նոր գրաված դիրքերում:

1943 թ. դեկտեմբերին Կերչի թերակղզու մի այլ հատվածում, կարևոր ստրատեգիական նշանակու-

թյուն ունեցող բարձունքի գրավման համար կատաղի մարտ է բորբոքվում Զիլինգարյանի գլխավորած գրոհող դասակի և թշնամու միջև։ Ինչպես միշտ, այս անգամ էլ Զիլինգարյանը ցուցաբերում է սանձարտություն և անվախորեն ղեկավարում մարտը, համարձակորեն գնդացրային անընդմեջ կրակով ոչնչացնելով թշնամուն, ընդհուպ մոտենում է բարձունքին, բայց այստեղ դասակը ընկնում է թշնամու ականանետային կրակի տակ։ Պայթած արկի բեկորից Զիլինգարյանը մահացու վերք է ստանում և զոհվում է բարձունքի գրավումը չավարտած։ Զիլինգարյանի մարտիկները ցասումով լցված իրենց կրած կորստի համար շեշտակի գրոհով գրավում են բարձունքը և վրեժ լուծում թշնամուց։

* * *

Ուկրաինայում կռվող հայուհիներից աչքի է ընկնում Երևանի Պուշչյանի անվան դպրոցի շրջանավարտ, կոմերիտուհի Անժելիկ Միքայելյանը։ Նա մասնակցել է Լուգանսկ, Խարկով, Պոլտավա քաղաքների ազատագրմանը, համարձակ ու քաջ մարտիկի համբավ հանել ռազմաճակատում և առաջադրանքները ճշտորեն կատարելու համար հրամանատարության կողմից պարգևատրվել անվանական զենքով։

Ռազմաճակատից մորն ուղարկած նամակում Միքայելյանը գրել է. «Մենք ուկրաինական հողումն ենք։ Ես այստեղ երբեք չեմ եղել։ Ուկրաինայի մասին միայն կարդացել եմ գրքերում, տեսել եմ կինոնկարներում, իսկ այժմ ես Ուկրաինայում եմ և ինձ թվում է, որ նա ինձ համար նույնքան հարազատ է, որքան իմ Հայաստանը»[1]։

Միքայելյանը շուտով ստանում է սպայի կոչում, դառնում լավագույն հետախույզ և իր մարտական ըն-

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 58, թ. 2։

կերների հետ բազմիցս թափանցելով հակառակորդի պաշտպանության խորքը, հաջողությամբ թշնամուց «լեզու» է որսում՝ բերելով ռազմական կարևոր տեղեկություններ: 1942 թ. Անժելիկն իր մորն ուղարկած մի այլ նամակում այդ մասին գրում է. «...Լավ հետախույզ դառնալը մեծ գործ է, և ես ձգտում եմ լավը դառնալ: Իսկ թե իմ ձգտումները հաստատվում են գործնականում, կարող ես դատել այն բանից, որ օրերս ինձ շնորհվեց կրտսեր լեյտենանտի կոչում: Հիմա ես սպա եմ: Վստահությունը կարդարացնեմ»[1]:

Հայրենական պատերազմին մասնակցած քաջարի հայ կանանց շարքերում քիչ չէին նաև ինտյալիստները, որոնք իրենց դիպուկ կրակով ոչնչացրել են բազմաթիվ հիտլերականների: Դրանցից մեկը՝ Լենինային Ղարաբաղի Զարդախլու գյուղի քաջ դուստրերից Նվարդ Վարդանյանն էր, որը իր հմտությամբ ետ չէր մնում տղամարդ ինտյալիստներից: Նա հպարտ իր հաջողություններով, ռազմաճակատից մորը ուղղած նամակում գրել է. «Սիրելի նանի ջան, ինձանից հարցնեք, ողջ և առողջ եմ, անհոգ մնացեք: Ես ինձ անչափ երջանիկ եմ զգում, որ կարողանում եմ անձամբ կատարել ինձ հանձնարարված մարտական առաջադրանքները: Մեր այրվող քաղաքների, քարուքանդ արված գյուղերի, գնդակահարված մանուկների համար վրեժ լուծել թշնամուց: Ես որպես ինտյալիստուհի պարտավորվել եմ անվրեպ կրակել և անխնա ոչնչացնել հիտլերյան գավթիչներին: Ազիզ նանի ջան, իմ մասին չմտածես, երեխաներին լավ պահիր, երջանկություն, հաղթանակի օրը մոտենում է, մեր քաջ Կարմիր Բանակը քշում, ընաջնջում է ֆաշիստական բանդաներին:

Կոլխոզում լա՛վ աշխատեք, է՛լ ավելի կրկնապատկեք ձեր եռանդը և ուժեղացրեք օգնությունը երկրին և

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 22, թ. 1:

ռազմաճակատին։ Ես անպայման կգամ։ Սպասեցնք իմ հաղթական վերադարձին։

Կարոտալի բարևներով ու համբույրներով, քո դուստր Նվարդ»[1]։

Բաց անալպերուհին, խոր կերպով գիտակցելով ռազմաճակատի և թիկունքի սերտ կապը, իր նամակում կոչ է անում թիկունքում աշխատող կանանց, որպեսզի նրանք ռազմաճակատի հաջողություններին պատասխանեն աշխատանքային նորանոր սխրագործություններով և միասնական ուժերով պայքարեն հաղթանակի համար։

Հայ ժողովրդի շատ դուստրեր Հայրենական պատերազմի ռազմաճակատներում աչքի են ընկել իրենց անօրինակ սխրագործություններով, սակայն նրանցից շատերի մասին չկան լրիվ տեղեկություններ։ Այդ հերոսուհիներից մեկն է ծովային հետախույզ մարտիկ Սիրանույշը, որի ազգանունը, դժբախտաբար, մեզ հայտնի չէ։ Նրա մասին մեզ տեղեկություններ է հաղորդել զինվորական թերթի թղթակիցներից մեկը, որին Սիրանույշը հանդիպել է ռազմաճակատում և իր մարտական գործունեության մասին պատմել հետևյալը.—

«Մի անգամ մենք պայթեցրինք կամուրջը և դադարեցրինք հակառակորդի շարժումը խճուղու վրա, իսկ ապա թափանցեցինք այն բնակավայրը, որտեղ ռումինացիներն էին։ Մեր նռնակները տեղացին այն տների վրա, որտեղ գտնվում էին զինվորներ ու սպաներ։ Ռումինացիները տներից դուրս էին թռչում և տեղն ու տեղը սպանվում մեր ավտոմատավորների տեղատարափ կրակից։ Ուշքի գալով մեր հարձակումից՝ ռումինացիները շուրջկալ սարքեցին, բայց մենք մեր հայրենի հողումն էինք։ Եվ այն ձորակը, որով գնում էին ռումինացիները, նրանց համար դերեզման դարձավ։

---

[1] ՀՊՊԿ արխիվ. ֆ. 270. գ. 22 թ. 1։

Բարձունքից մենք նրանց լավ էինք խփում։ Իսկ պայմանավորված ժամին մեր ետևից եկան կատերները, և մենք բարեհաջող կերպով մեր նավը վերադարձանք։ Հրամանատարությանը մանրամասնությամբ զեկուցեցինք այն ամենը, ինչ մենք հետախուզել էինք։

Երկրորդ գործողությունը մի քիչ ավելի դժվար էր։ Մի քանի օր մնացինք անհաց ու անջուր, բայց ոչ ոք չէր հուսալքվում, գանգատվում։ Ծովայիններն այդպիսի մարդիկ են։ Նրանք միշտ էլ ուրախ ու կայտառ են։ Մենք երեքով գնում էինք։ Երկար ժամանակ անցնում էինք բլրակներով։ Գիշերը գերմանացիների հանդիպեցինք, որոնք մեզ վրա նռնակներ նետեցին։ Ընկերներից մեկն սպանվեց։ Մնացինք երկուսով։ Թշնամիները մեզ ամեն կերպ ուզում էին որսալ։ Հրկիզեցին անտառը։ Դե՛, մտածում եմ, եթե բռնեն, ֆաշիստները թանկ կվճարեն մեր կյանքի համար—ծովայինի պես կմեռնենք։ Նռնակը պատրաստեցի։ Մտածում եմ՝ ձիդ կտամ օղակից և թշնամիների հետ միասին կպայթեմ։ Բայց մեզ հաջողվեց դուրս գալ այրվող անտառից։ Այնուհետև երկար ժամանակ մնացինք անձրևի տակ, սառչում էինք։ Մի քանի օր բերաններս ոչինչ չէինք դրել, բացի հոնից և վայրի տանձից. բոլորովին թուլացել էինք։ Հետո հանդիպեցինք պարտիզաններին, նրանք մեզ անցկացրին ռազմաճակատի գծով։ Այսպես ավարտվեց այդ արշավը դեպի թշնամու թիկունքը»[1]։

* * *

Հայրենական պատերազմի պատմության հերոսական տարեգրության մեջ պատվավոր տեղ է գրավում եռակի շքանշանակիր Հայկական 89-րդ Թա-

---

[1] Տես «Սովետական Հայաստան», 25 հուլիսի 1943։

Կրտսեր լեյտենանտ
Արաքսյա Հարությունյան

Սերժանտ Հայկուշ Ավետյան

ՀԵՌԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՒՍԵՆԳԱՍՏՈՍԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

մանյան դիվիզիան, որը մարտերով Կովկասյան նախալեռներից հասավ մինչև Բեռլին։ Նրա մարտական շարքերում աղամարդ ռազմիկների կողքին կային նաև շատ հայուհիներ։

Հայկական Թամանյան դիվիզիայի շարքերում մարտընչել է ավագ սանիտարական հրահանգիչ, կոմերիտուհի Ռոզա Սարգսյանը, որն իր զինվորական ծառայության ընթացքում ոչ միայն եղել է սանիտար և բժշկական օգնություն է ցույց տվել բազմաթիվ վիրավոր մարտիկների, այլև առաջին հերթին լավ հետախույզ և քաջ մարտիկ էր։ Նա Կովկասյան լեռներից դաժան մարտերով հասել է մինչև Բեռլին։

Ռոզա Սարգսյանը, երևանցի, հայրենասեր հայուհին հոր և եղբոր հետ միասին ռազմաճակատ է մեկնել պատերազմի հենց առաջին օրերին։ Ռազմաճակատում Ռոզան կորցնելով իր հարազատներին, վրեժի ցասումով լցված, դյուցազնական համարձակությամբ կռվում է հակառակորդի դեմ։

1943 թ. փետրվարին կատաղի մարտեր էին գնում Կրասնոդար քաղաքի ազատագրման համար։ Մարտերից մեկում կոմերիտուհի Սարգսյանի խրամատի ուղղությամբ շարժվում է թշնամու տանկը։ Խուսափել, թե՞ մարտի բռնվել ահռելի գազանի հետ,— մտածում է Ռոզան, բայց երկար մտածելու ժամանակ չկար։ Նա անմիջապես ստուգում է իր մոտ եղած հակատանկային նռնակները և պատրաստ դրությամբ՝ շունչը պահած՝ սպասում այնքան ժամանակ, մինչև թշնամու տանկը մոտենում է։ Ռոզան արագորեն իրար հետևից նետում է նռնակները։ Տանկը շուռ է գալիս և բոցավառվելով այրվում։ Խիզախուհին չկորցնելով իրեն, մարտի է բռնվում նաև տանկից դուրս թռած տանկիստի հետ և տեղն ու տեղը սպանում նրան։ Այդ մարտում վիրավորվում է նաև ինքը՝ քաջ հայրենասիրուհին և տեղափոխվում

հոսպիտալ։ Սակայն լրիվ չապաքինված, դարձյալ վերադառնում է գործող բանակ։

Թամանյան դիվիզիայի շարքերում Սարգսյանն ալ-նուհեան խնդախորին մասնակցում է Լենինգրադի ազատագրմանը, Օդեր գետի ափին «Հայկական փոքր հող» անուն ստացած պլացդարմի պաշտպանությանը և նոր սխրանքներով աչքի է ընկնում գերմանական Կալիշ, Լենսբերգ, Մեգերիտս, Շվիբուս, Յուլիխաուս, Ֆրանկֆուրտ (Օդերի վրա) քաղաքների գրավման մարտերում, իսկ Բեռլինի համար մղվող հաղթական մարտերում ավելացնում է իր մարտական հաշիվը, որի համար արժանանում է Գերագույն Գլխավոր հրամանատարության շնորհակալագրերի և պարգևների։ Հայրենիքը նրա կուրծքը զարդարել է «Կարմիր Դրոշ»-ի, երկու «Կարմիր Աստղ»-ի և «Փառքի երրորդ աստիճան»-ի շքանշաններով, «Կովկասի պաշտպանության», «Վարշավայի ազատագրման», «Բեռլինի գրավման» և «Հայրենական Մեծ պատերազմում 1941—1945 թթ. Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով։

Հայկական 89-րդ դիվիզիայի շարքերում փառավոր մարտական ուղի անցավ նաև Լենինյան Կոմերիտմիության անդամ Հայկուշ Ավետյանը։ Ավետյանը ծնվել է 1921 թ. Ապրիլի շրջանի Վերին Շիրովկա գյուղում, սովորել է տեղի միջնակարգ դպրոցում։ Նա ակտիվ կոմերիտուհի էր։ Հայրենական պատերազմը սկսվելուն պես Հայկուշը մեկնում է Կարմիր Բանակ և այդ օրվանից սկսում է նրա մարտական կյանքի ուղին։ Նա Ղրիմից հասնելով մինչև Գերմանիա մասնակցում է թշնամու վերջնական ջախջախմանը և հաղթող զինվորի օրինական հպարտությամբ Բեռլինից վերադառնում Հայրենիք։ Ավետյանը Օդեր-Ֆրանկֆուրտի պլացդարմի հերոսներից է։

1945 թ. փետրվարի 15-ին, գիշերը, թամանցիները Ֆրանկֆուրտի մոտ Օդերի վրայով գնացին կատարելու և նրա ձախ ափին ստեղծեցին ամուր պլացդարմ։ Այդ փոքրիկ հողակտորի վրա հայ մարտիկները երկու ամիս համառ ու արյունահեղ մարտեր մղեցին։ Այդ հողակտորը իրավացիորեն ստացավ «Հայկական փոքր հող» անունը։

Հակառակորդը թե՛ օդից, թե՛ ցամաքից անընդհատ ռմբակոծում և գնդակոծում էր փոքրիկ պլացդարմը։ Մի կոտորի ռմբակոծությունից հետո ֆաշիստները մոտենում են պլացդարմի հատվածներից մեկին, կռվի բռնվում հայ մարտիկների հետ, որոնք արդեն դուրս էին եկել խրամատից։ Կռիվն անհավասար էր և օրհասական։ Մայոր Սիմոնյանի գումարտակի մարտիկները քաջաբար դիմադրում էին թշնամու գերակշռող ուժերին։ Դաղտված հակառակորդը, առանց հաշվի առնելու իր կրած կորուստները, սողում էր առաջ, մոտենում մեր դիրքերին։ Զորամասի հրամանատարը դիտակետից լարված ուշադրությամբ հետևում էր անդի ունեցող անհավասար մարտին։ Նա նկատում է խրամատում խորհրդավոր կերպով քողարկված իր մարտիկներից մեկին։

«Երևի նոնակ չունի մարտիկը»,— մտածում է անհանդգստացած հրամանատարը։ Բայց ահա մի բոպե անց, խրամատից վեր ցատկելով մարտիկը արագորեն նոնակներ է նետում հակառակորդի վրա և նորից քողարկվում։ Այդ քաջագործությունը կասեցնում է թշնամու առաջխաղացումը, որից հետո զորամասն իրար հետևից համազարկեր տալով ետ է շպրտում հակառակորդին իր նախնի դիրքը։

Մարտից հետո հրամանատարը անձամբ այցելում է մեծ խիզախություն կատարած մարտիկին։ Այստեղ նա էլ ավելի է զարմանում և հիանում, երբ իր առաջ տեսնում է կին ռազմիկի։ Դա մայոր Հ. Սիմոնյանի

գումարտակի կոմերիտուհի, ավտոմատավոր Հայկուշ Ավետյանն էր։

Վերջին գրոհներն էին գնում Բեռլինի գրավման համար։ Այդ օրերին Ավետյանի կուրծքը հայրենիքն արդեն զարդարել էր «Կարմիր Աստղ»-ի շքանշանով և «Մարտական ծառայությունների համար» մեդալով։ Այստեղ նա իր մարտական ընկերների հետ քաջաբար մասնակցում է Բեռլինի փողոցային մարտերին։ Թշնամու կրակի տակ, գրոհայիններին հետ միասին, փողոցից-փողոց անցնելով, նա հասնում է Ռայխստագին, ականատես է լինում Կարմիր Բանակի պատմական խոշոր հաղթանակին, ապրում այդ երջանկությունը, Ռայխստագի վրա տեսնում հաղթանակի դրոշը և նրա պատի վրա թողնում իր երկտող մակագրությունը. «Կարմիր Բանակի շարքերում այստեղ հասավ հայուհին և Ռայխստագից դիտեց ծնկաչոք Բեռլինը»[1]։

Հաղթանակի օրը՝ 1945 թվականի մայիսի 9-ին, գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ կապիտան Հմայակ Օհանյանը սերժանտ Հայկուշի հորը ուղարկած նամակում գրել է. «Ձեր սիրտը թող անսահման երջանկությամբ լցվի, որ Դուք հայրն եք մի հերոսուհու, որին Թամանյան Հայկական դիվիզիայի մարտիկները «Կրակե աղջիկ» են կոչում։ Պատերազմը հաղթանակով ավարտվեց, շուտով մեր Հայկուշը կվերադառնա։ Իրենց ընտանեկան օջախները կվերականգնեն նաև մեր դիվիզիայի բազմաթիվ ռազմիկներ։ Նրանք իրենց սրտի խորքում Հայկական լեռնաշխարհը կտանեն բոլորիս սիրելի Հայկուշին և իրենց հարազատներին երկար կպատմեն «Կրակե աղջկա» մասին, որը Հայրենական Մեծ պատերազմի ռազմադաշտերում պայծառ փառքով օծեց հայուհու անունը»[2]։

---

[1] «Լենինյան դրոշ», 23 ապրիլի 1946։

[2] Նույն տեղում։

Բեռլինի գրավմանը մասնակցած բազմաթիվ հայուհիներից էր նաև Հայկական 89-րդ Թամանյան դիվիզիայի զենիթային հրանոթի մարտիկ Երջանիկ Ենոքյանը։ Նա Բեռլինի գրավումից հետո 1945 թ. մայիսին իր մարտիկ եղբորը ուղարկած նամակում գրել է. «Ազիզ եղբայր ջան. ընդունիր քո ռազմիկ քրոջ ջերմ և կարոտալի բարևները։ Նամակս գրում եմ Բեռլինից, այն քաղաքից, որի գրավման վերջին մարտերին մասնակցել եմ ես։

Մենք մոռացել էինք քունն ու հանգիստը և սրընթաց հետապնդում էինք թշնամուն։

...Մարտերի ծանր օրերին հայրենի հողի կարոտն այրում էր մեր սիրտը, սակայն որքան խորն էինք գգում այդ կարոտը, այնքան ավելի ուժգին էինք հարվածում թշնամուն, որպեսզի շուտ վերադառնայինք մեր հարազատների գիրկը։

... Ազիզ եղբայր ջան, քո քրոջ ձեռքը չէր դողում թշնամուն հարվածելիս։ Մեր զենիթային հրանոթը վայր է գցել թշնամու շատ ինքնաթիռներ։

Գարսևան ջան, հիմա լռել է հրանոթների որոտը։ Հաղթանակի լուրը երջանկություն պարգևեց ամեն մի սովետական քաղաքացու»[1]։

Ահա այսպես էին մարտնչում թշնամու դեմ արիասիրտ հայ կանայք Սովետական Միության Զինված Ուժերի մարտական շարքերում, բարձր պահելով հայ ժողովրդի մարտական տրադիցիաները և հարստացնելով նրա հերոսական պայքարի պատմության էջերը։

ԲԺՇԿԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

Գերմանական ֆաշիստների դեմ մղվող Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, ինչպես ռազմա-

[1] «Մարտ հանուն Հայրենիքի», 6 հուլիսի 1945 թ։

ճակատում, այնպես էլ թիկունքում առողջապահության բնագավառի աշխատողները հարատև բանակի վիրավոր ու հիվանդ ռազմիկների բուժսպասարկման գործին նվիրեցին իրենց բոլոր ուժերն ու գիտելիքները։ Բարձր և միջին որակի հաղարավոր բժշկական աշխատողներ համալրեցին Կարմիր Բանակի շարքերը։ Նրանք ռազմաճակատում՝ հակառակորդի կրակի տակ, առաջին օգնությունն էին ցույց տալիս վիրավոր մարտիկներին ու հրամանատարներին։ Հոսպիտալներում, սան. կայաններում, հիվանդանոցներում ոչինչ չէին խնայում մարտիկներին ու հրամանատարներին բուժելու և ըստ հնարավորին արագ նրանց մարտունակությունը վերականգնելու համար։ Բուժ. աշխատողները անձնվիրությամբ սպասարկում էին նաև քաղաքացիական բնակչությանը։

Մ. Ի. Կալինինը, Կարմիր Բանակի գլխավոր վիրաբույժ, բժշկական ծառայության գնդապետ Ն. Ն. Բուրդենկոյին Լենինի շքանշան և «Ոսկի Աստղ» մեդալ հանձնելու ժամանակ ասել է. «Այս պարգևատրումը նշանակում է, որ մեր Կարմիր Բանակի բժշկական սպասարկումը կանգնած է նույն շարքում, ինչ ավիացիան, հրետանային սպասարկումը, որ բժշկական աշխատողները բանակի շարքերում նույնքան անհրաժեշտ են, որքան մարտիկները ու հրամանատարները»[1]։

Պատերազմի հենց առաջին օրերին հաղարավոր հայուհիներ «Մեզ ուղարկեցեք ռազմաճակատ» պահանջով ներկայացան դիմումատական կոմիսարիատները, հավաքակայանները և Կարմիր խաչի ընկերության կոմիտեները։ Ռազմաճակատին բժշկա-սանիտարական կազբերով ապահովելու ուղղությամբ ծավալուն աշխատանք տարան նաև Հայկական ՍՍՌ Առողջապահության մի-

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 230, գ. 1։

նիստությունը և Կարմիր խաչի ընկերությունը։ Կարմիր խաչի ընկերության կողմից պատրաստվեցին 1500 բժշկական քույրեր և սանիտարներ[1]։

Ռազմաճակատը բժշկական կադրերով ապահովելու համար Կարմիր խաչի կողմից կազմակերպված քույրական դասընթացներ ավարտածների 17% մեկնեց գործող բանակ, 20% աշխատանքի անցավ եղբայրական ռեսպուբլիկաների հոսպիտալներում, իսկ մյուսներն աշխատում էին ռազմա-սանիտարական դնացքներում, առողջապահության մինիստրության հիմնարկներում և այլ սանիտարական կետերում[2]։

Պատերազմի տարիներին Հայաստանի Կարմիր խաչի ընկերությունը պատրաստեց 342 սանիտարական հրահանգիչ և 1028 սանիտար[3], որոնց մեծ մասը անմիջապես մեկնեց ռազմաճակատ։

Ռեսպուբլիկայի Կարմիր խաչի ընկերությունը մեծ աշխատանք կատարեց և զգալի արդյունքների հասավ դոնորական կադրեր հավաքագրելու ուղղությամբ։ Ընկերության ավելի քան 1000 անդամ կամավոր ցուցակագրվում են պահեստային դոնորների շարքերում, իսկ 754 երիտասարդ հայուհիներ արյան փոխներարկման ռեսպուբլիկական կայանի առաջին իսկ պահանջով կամավոր կերպով իրենց արյունն էին տալիս վիրավոր մարտիկների և հիվանդների առողջությունը վերականգնելու համար։

Սովետական Հայաստանի Կարմիր խաչի ընկերության անդամները պատերազմի ընթացքում հսկայական

---

[1] Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1958, էջ 509։

[2] Վ. Մ. Ավագյան, Հայկական ՍՍՌ Կարմիր խաչի ընկերության գործունեությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, Աշխատություններ հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի, № 2, 1949, էջ 27։

[3] Նույն տեղում, էջ 28։

շեֆական օգնություն կազմակերպեցին նաև մանկանների, պատերազմի հաշմանդամների և ճակատալիների ընտանիքների նկատմամբ։

Հայաստանից Կարմիր Բանակի բժշկա-սանիտարական ծառայության մեջ ընդգրկված անձնակազմի մի պատկառելի մասը կանայք էին։ Նրանցից լավագույնները համալրեցին 390, 408, 409, 89-րդ և մյուս հայկական դիվիզիաների առանձին բժշկա-սանիտարական գումարտակները, դնդալին և գումարտակային և մյուս ստորաբաժանումների բժշկա-սանիտարական մասերը։ Ռազմաճակատի առաջավոր դիրքում հակառակորդի ուժեղ ռմբակոծման ու դնդակոծման տակ, նրանք առաջին օգնությունն էին ցույց տալիս սովետական վիրավոր ռազմիկներին։

Ռազմաճակատ մեկնած առաջին անվեհեր բժշկական քույրերից մեկն էր քսանամյա կոմերիտուհի Գոհար Նազարյանը, որը, պատերազմի պատճառով թողնելով Երևանի Բժշկական ինստիտուտը, կամավոր մեկնեց ռազմաճակատ։ 1941 թ. Դեկտեմբերին նա գտնվում էր գործող բանակի առաջավոր դիրքերում։ Գոհարի համար ռազմաճակատում առաջին օրերը ծանր էին ու ճնշող, որովհետև մեր բանակը հարկադրված էր թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ ժամանակավորապես նահանջել։

Հարկադրական նահանջի ժամանակ, արտակարգ դժվարին պայմաններում, պաշտպանողական համառ մարտերում բժշկական ծառայության լեյտենանտ Նազարյանը չվհատվելով, լարելով իր բոլոր ուժերը, վիրավորների նկատմամբ ցուցաբերում էր մեծ հոգատարություն։ Նա թշնամու տեղատարափ կրակի տակ սողեսող մոտենում էր վիրավոր մարտիկներին, կապում նրանց վերքերը և արագորեն դուրս բերում կրակի գծից։

Բժշկական քույր Գոհար Նազարյան

Բժշկական քույր Գոհար Հարությունյան

1941 թ. դեկտեմբերին Դոնի Ռոստովի շրջանում մղված դաժան մարտերից մեկում Գոհարը ռազմադաշտից դուրս է բերում 44 վիրավոր ռազմիկ և նրանց տեղավորում մի կիսավեր խրճիթում: Կարճ դադարից հետո թշնամին այդ տեղամասում նորից է անցնում հարձակման և շրջապատում այդ բնակավայրը: Ստեղծված արտակարգ ծանր վիճակում Նազարյանը չի հուսահատվում, դիշերը վրա հասնելուն պես նա իր օգնականներով վիրավոր մարտիկներին զգուշորեն դուրս է բերում խրճիթից և անվնաս հասցնում գետափին գտնվող սանիտարական կայանը:

Մի այլ մարտում անձնազոհ լեյտենանտ Նազարյանը մարտի դաշտից դուրս է բերում 86 վիրավոր զինվոր ու սպա՝ իրենց զենքերով: Գոհարն իսկական հոգատար դթություն քույր էր... Արյունահեղ մարտերի դըժվարին պայմաններում նա իր ջերմ, հոգատար վերաբերմունքով թեթևացնում էր վիրավորների ցավը: Զորամասի հրամանատարությունը դնահատելով Նազարյանի մարտական ծառայությունները և հերոսական անձնազոհությունը՝ նրան ներկայացնում է Լենինի շքանշանի պարգևատրման: Սակայն, դեռևս շքանշանը չստացած, կատաղի մարտերից մեկի ժամանակ թշնամու անողոք դնդակը խլում է կոմերիտական խիզախ լեյտենանտ Նազարյանի կյանքը:

Անձնուրաց բժշկական քույր էր Լենինականի Մալիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի առաջավոր բանվորուհի, դվարդիայի ավագ Գոհար Հարությունյանը, որը Հայրենական պատերազմի սկզբից մինչև նրա հաղթական ավարտը մասնակցել է մեր հայրենիքի անկախության և ազատության համար մղվող բազմաթիվ մարտերին: Հարությունյանն ակտիվ կերպով մասնակցել է Ռոստովի, Ստալինգրադի, Վորոշիլովգրադի ազատագրման, Դնեպրի անցման, Լվովի, Պրագայի ա-

զատագրման և Բեռլինի գրավման համար մղվող մարտերին։

Գոհարը ծնվել է 1916 թ. Դարաքիլիսայում (այժմ Կիրովական), բանվորի ընտանիքում։ Վաղ զրկվելով ծնողներից՝ նա 13 տարեկան հասակում սկսում է աշխատել։ 1925 թ. Գոհարը որպես ջուլհակ աշխատանքի է ընդունվում Լենինականի տեքստիլ գործարանում։

1932 թ. նա ընդունվում է ԼԿԵՄ շարքերը և ակտիվ կերպով մասնակցում է գործարանի հասարակական աշխատանքներին։

Առաջավոր բանվորուհին 1937 թ. ընդունվում է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի շարքերը։

Հայրենական պատերազմի հենց առաջին օրերին Գոհար Հարությունյանը կամավոր կերպով մեկնում է Կարմիր Բանակ և 1941 թ. սեպտեմբերի սկզբին 136-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում մասնակցում է մարտերին որպես սանիտարական դրուժինայի հրամանատար։

Դիվիզիան նոյեմբերին մարտերի մեջ է մտնում Դոնի Ռոստով քաղաքի ուղղությամբ։ Մարտերը գնալով կատաղի բնույթ էին ստանում, գերմանական զորքերին հաջողվում է նորս խցկվել քաղաք՝ նրա տարբեր կողմերից։ Առաջին գծում մեծ թվով վիրավորներ կային, անհրաժեշտ էր բժշկական օգնություն ցույց տալ նրանց, բայց հակառակորդի ուժեղ կրակը դժվարացնում է ռազմադաշտից վիրավոր մարտիկներին դուրս բերելը։ Այդ վտանգավոր պայմաններում պարտիայի անդամ, բժշկական քույր Գոհարը խնդրում է գումարտակի հրամանատարին իրեն թույլ տալ մեկնել առաջավոր գիծ։ Երկու բժիշկների հետ միասին նա մեկնում է մարտի վայրը։ Գոհարը ճանապարհին կորցնում է իր ընկերներին։

Կովի թեժ պահին բժշկական քույրը հասնում է առաջին գիծը և տասից ավելի ծանր վիրավորներ է դուրս բերում ռազմադաշտից։ Դիվիզիայի հրամանատար, գնդապետ-մայոր Վասիլենկոյի անմիջական հանձնարարությամբ նա մի քանի անգամ նորից մեկնում է առաջավոր գիծ և, չնայած հակառակորդի տեղատարափ կրակին, դուրս է բերում ևս 17 վիրավոր մարտիկ։

Դոնի Ռոստովի մոտ ցուցաբերած այս խիզախության համար զորամասի հրամանատարությունը Գ. Հարությունյանին 1941 թ. սեպտեմբերի 24-ին պարգևատրում է «Մարտական ծառայությունների համար» մեդալով։

1943 թ. օգոստոսին համառ մարտեր էին մղվում Խարկովի ազատագրման համար։ Այստեղ բժշկական քույր Հարությունյանը մարտի մեկ օրվա ընթացքում անձնազոհ օգնություն է ցույց տալիս 81 վիրավոր մարտիկի, նրանց դուրս բերելով կրակային գծից։ Դրա համար նա պարգևատրվում է «Կարմիր Աստղ»-ի շքանշանով։

Հարությունյանը պատերազմի ավարտը դիմավորում է Բեռլինում։ Եվ Բեռլինի գրավման համար մղված մարտերին իր ակտիվ մասնակցությամբ հարստացնում սխրագործություններով լի իր կենսագրությունը։

Գոհար Հարությունյանը «Կարմիր Աստղ»-ի շքանշանից բացի պարգևատրված է «Մարտական ծառայությունների համար» երկու մեդալով, ինչպես նաև Կովկասի, Ստալինգրադի պաշտպանության համար, Պրագայի ազատագրման, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար մեդալներով։

Պատերազմի ավարտումից հետո Գոհար Հարությունյանը վերադառնում է Լենինական և շարունակում աշխատել արտադրության մեջ։ Այժմ նա Լենինականի

Չկալովի անվան երկրորդ կարի ֆաբրիկայում ագրեգատի վարպետ է։

* * *

Երևանի բժշկական տեխնիկումի ուսանող Կիրովաբադցի Լյուսյա Շահինյանը դերազանց ցուցանիշներով հանձնում էր տարրական քննությունները, երբ սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը։ Ժամանակավորապես հրաժարվելով ինստիտուտ ընդունվելու իր վառ ձգտումից, նա ռազմաճակատ մեկնելու դիմում է ներկայացնում Երևանի Կիրովյան շրջանի զինկոմիսարիատին։ Զինկոմը երկար ժամանակ չի համաձայնվում փոքրահասակ Լյուսյային բանակ վերցնել, բայց հայրենասեր հաստատուն վերջ ի վերջո հասնում է իր նպատակին՝ Լյուսյան համալրում է 398-րդ հրաձգային դիվիզիայի շարքերը։ Աչքի ընկնելով իր նվիրված աշխատանքով, նա շուտով նշանակվում է սանիտարական դրուժինայի հրամանատար։ 1941 թ. նոյեմբերին արդեն 824-րդ գնդի շարքերում մասնակցում է Դոնի Ռոստովի մոտ տեղի ունեցող ծանր մարտերին։ Շահինյանի համար սարսափելի չէին գոռ մարտի որոտները, նա պայթող ականների տարափի տակ խիզախորեն նետվում էր ամենավտանգավոր տեղերը. բժշկական առաջին օգնություն ցույց տալիս մարտիկներին և ծանր վիրավորներին դուրս բերում կրակի առաջին գծից։ Բազմաթիվ մարտերում նա իրեն դրսևորում է որպես իսկական քաջ մարտիկ և դրսևորում հրամանատարության ուշադրությունը։

Դոնի Ռոստովի տակ միայն մեկ օրվա ընթացքում Շահինյանը մարտադաշտից դուրս է բերել 57 վիրավոր ռազմիկի։ Այդ սխրագործությունն անմիջապես արձանագրվում է դիվիզիայի ռազմաճակատային „Сын родины" թերթում։ «Շահինյանը 56 մարտիկի և մեկ հրամանատարի փրկեց մահից, կապելով նրանց վերքերը և դուրս բերելով թշնամու կրակի տակից,— գրել է թերթը։ Նա

կոմերիտուհի է և մարտի մեջ դործում է որպես Հայրենիքի հավատարիմ դուստր։ Վատանդելով իր կյանքը, նա փրկեց շատերի կյանքը»[1]։

Մարտից հետո կոմերիտուհի Շահինյանը Կոմունիստական պարտիայի շարքերն ընդունվելու դիմում է ներկայացնում, որի մեջ դրված է, «Ուզում եմ կոմունիստ լինել։ Խնդրում եմ քննել դիմումս»[2]։ Զորամասի պարտկազմակերպությունը նրան միաձայն ընդունում է պարտիայի շարքերը։ Իսկ հրամանատարությունը խիզախ հայուհուն ներկայացնում է բարձր պարգևի՝ Լենինի շքանշանի։

1942 թ. կերչի ուղղությամբ Կարպաչյա դյուղի պաշտպանողական ծանր մարտերում սանիտարական դրուժինայի հրամանատար Շահինյանը նոր անձնուազոհ սխրանքներ է կատարում։ Ծանր վերք ստացած ուկրաինացի մի մարտիկի առնելով ուսին, լարելով իր բոլոր ուժերը, անցնում է մի քանի կիլոմետր, վիրավորին հասցնում է սանիտարական կետ և փրկում նրա կյանքը։ Այդ մասին վիրավոր մարտիկը պատմել է. «Մեզ դրոհի հրաման տրվեց։ Ես գտնվում էի առաջին շարքում։ Հակառակորդն արձիգ էր թափում մեզ վրա։ Հաղթահարելով թշնամու կրակային պատնեշը, մենք մոտեցանք նրա դիրքերին։ Դուրսը հոսում նռնակներին։ Տվե՛ք սրիկաներին, տվե՛ք, ուռա էի գոռում ես, երբ միանգամից ընկա գետնին։ Ինձ թվաց, թե երկու ոտքս էլ կարվեցին։ Հետո մթնեցին աչքերս։ Ես տարտամ կերպով զգացի հեղուկի հոսելը մեջքիս և թևերիս վրա։ Մտածեցի, որ հիմա իմ վերջն է, արյունաքամ կլինեմ ու կմեռնեմ։

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 85, թ. 8։

[2] «Քաջասիրտ հայուհիները», Հայպետհրատ, 1943, էջ 19։

Չգիտեմ ինչքան ժամանակ էր անցել, երբ սաբ ցավից ուշքի եկա։ Մեկն ինձ քարշ էր տալիս սողնակ-թեմքերի արանքով։ Մեր շուրջը պայթում էին ականները. իմ փրկիչը հոգնած կանգ առավ։ Այդ բոլորին տեսա նրա դեմքը։ Սահակը, թեև աչքերով, փոքրահասակ մի աղջիկ էր։ Նա խղճի խայթ զգաց, դիտելով այդ փոքրիկ աղջկա քրտնած դեմքը և հեսցը։ Ինչպես և ինչքան տեղ էր նա քաշ տվել կլոակինգան իմ ծանր մարմինը՝ այդ չգիտեի ես։ Կարծես կռահելով իմ մտքերը, կամ ուրախացած, որ ես բացել եմ իմ աչքերը, նա ասաց.

—Ոչինչ, եղբայր, վերջդ վատնդալոր չէ, շուտով կհասնենք դաշտային հիվանդանոց»[1]։

Մի քանի օր հետո, երբ արդեն վիրավոր մարտիկի գիտակցությունը վերականգնվում է, նա գիմում է բժշկին—Բժիշկ, իսկ ո՞վ էր այդ սահակ փոքրիկ աղջիկը, որ փրկեց ինձ։ Խնդրում եմ նրան կանչել ինձ մոտ։

«Այդ օրը ծանոթացա փոքրիկ հայուհու, իմ կյանքի փրկիչի հետ։ Եվ քանի տարում եմ, չեմ մոռանա նրան՝ Լյուսյա Շահինյանին, այդ իսկական հերոսուհուն»[2]։

Շահինյանը ոչ միայն հոգատար, անձնազոհ բժշկական քույր էր, այլև քաջ հետախույզ։ Նա իր մարտական ընկերների հետ միասին 1942 թվականի ձմռանը հրամանատարության հատուկ առաջադրանքով հետախուզության է գնում թշնամու թիկունքը։ Մեկ անգամ հերթական հետախուզության ժամանակ Շահինյանը, ձմռան դժվարին պայմաններում, անցնելով թշնամու թիկունքը, մեծ զգուշությամբ ուսումնասիրում է նրա ամրությունները և հրդեհում զինամթերքի մի պահեստ։ Այդ ժամանակ նա վիրավորվում է թշնամու գնդակից։

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 85, թ. 14։

[2] Նույն տեղում, էջ 13։

Հաղթահարելով ցանկն ու դժվարությունները, մարտական խնդիրը կատարած Լյուսյան նա է վերադառնում զորամաս։ Սանիտարական դրությունների հրամանատար Շահինյանը բազմաթիվ սխրագործությունների և հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու համար ներկայացվում է նոր պարգևատրման։

* * *

Բժշկական ծառայության լեյտենանտ Օֆելյա Պետրոսյանը պատերազմի սկզբից իր սանիտարական դասակով ակտիվորեն մասնակցում է Կովկասի հերոսական պաշտպանությանը։

Օֆելյան ծնվել է 1923 թ. փետրվարին, Ստեփանավանի շրջանի Գյուլագարակ գյուղում։ Յոթնամյա կրթությունը նա ստացել է հայրենի գյուղում, ապա տեղափոխվել է Երևան և ընդունվել Բժշկական ուսումնարան, որը ավարտել է 1939 թվականին։ Պատերազմը սկսվելուց հետո նա մոբիլիզացվում է բանակ և նշանակվում է սանիտարական դասակի հրամանատար։

Հայրենական պատերազմի երկրորդ ամսին, 6-րդ տանկային դիվիզիայի 12-րդ գնդի կազմում, Պետրոսյանը մեկնում է Իրան։ 1941 թ. նոյեմբերին Պետրոսյանը ստանում է նոր նշանակում և 6-րդ ռազմա-օդային բանակի կազմում մասնակցում է Դոնի Ռոստովի ազատագրման համար մղվող մարտերին, որտեղ թեժ կռիվներից մեկում վիրավորվում է։ Ապաքինվելուց հետո, 1942 թ. սկզբին, նա նշանակվում է Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի սանիտարական դասակի հրամանատար և մասնակցում է Թերեքի ափերին մղվող արյունահեղ մարտերին։

Ապրելով ժամանակավոր նահանջի դառնությունը, նա հարձակողական մարտերի ընթացքում անձնու-

բացառիկ մասնակցում է Մոզդոկի, Միներալնիե Վոդի, Ստավրոպոլի, Սրմավիր քաղաքների, Կուբանի և ապա հարավատ Ուկրաինայի ազատագրման մարտերին:

1942 թ. դեկտեմբերին Թերեք գետի ձախ ափին՝ Մոզդոկի մոտ, թշնամին օգտագործելով կրակային բոլոր միջոցները, քաղաքի մի հատվածում ստեղծել էր պաշտպանության ամուր հենարան: Հրետանային նախապատրաստությունից հետո, սովետական զորամասերի շարքերում Հայկական 409-րդ դիվիզիան նույնպես անցավ հարձակման: Հոհեր շատ կային: Օֆելյան մարտի թեժ պահին, կրակի տակից վիրավորներին հանելու համար, սողալով մոտենում է առաջի գծին: Հակառակորդը նկատելով նրան, գնդացրային ուժեղ կրակ է բացում: Սովետական մարտիկները իրենց կրակով պաշտպանում են Օֆելյային: Օֆելյան հասնելով վիրավոր ռազմիկին, առաջին օգնություն է ցույց տալիս ու նրան հասցնում է ապահով տեղ: Այդ օրը, Պետրոսյանը ռմբակոծության տակ, խրամատից խրամատ անցնելով դիրքերից դուրս է բերում ավելի քան 50 վիրավոր ռազմիկ: Մարտից հետո Օֆելյա Պետրոսյանը պարտիայի շարքերն ընդունվելու իր գրած դիմումում գրում է. «Ուզում եմ գերմանական ֆաշիստների դեմ մարտնչել որպես պարտիայի անդամ»[1]: Երկու օր հետո, մարտական պայմաններում, Օֆելյան ընդունվում է պարտիայի շարքերը:

Բժշկական ծառայության լեյտենանտ Պետրոսյանը իր անձնուրաց ծառայություններով աչքի ընկավ նաև Դնեպրի անցման ժամանակ: Դա 1943 թ. աշնանն էր: Լայնահուն Դնեպրի աջ ափը անցավ մի խումբ հերոսների հետ նաև Պետրոսյանը: Նրանք ստեղ-

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270. գ. 84, էջ 19:

Բժշկական ծառայության լեյտենանտ
Օֆելյա Պետրոսյան

Բժշկական ծառայության ավագ լեյտենանտ
Սոֆյա Լալայան

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԿՐՈՒԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ծեցին վոքրիկ պլացդարմ, շուտով մոտակա գյուղում դաժան մարտեր բորբոքվեցին։ Օֆելյան շարժվում էր առաջապահ ջոկատի շարքերում։ Գյուղի համար մղվող փողոցային մարտերի ժամանակ նա կրակի տակից դուրս է բերում 22 վիրավոր մարտիկ, որի համար պարգևատրվում է «Կարմիր Աստղ»-ի շքանշանով։

Պետրոսյանը Կրիվոյ Ռոգի մոտ Բատիզման գյուղի համար մղվող կռվում մարտադաշտից սանիտարական դասակի օգնությամբ դուրս է բերում 35 վիրավոր ռազմիկ։ Պետրոսյանը իր դասակով փառավոր ուղի է անցել Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում։ Այդ դիվիզիան, Ուկրաինայի արդյունաբերական խոշոր կենտրոն Կիրովոգրադ քաղաքի ազատագրման ժամանակ աչքի ընկնելու համար, Գերագույն Գլխավոր Հրամանատարության կողմից, 1944 թ. հունվարի 9-ի հրամանով, կոչվեց Կիրովոգրադյան, արժանացավ շնորհակալության և պարգևատրվեց «Բոգդան Խմելնիցկու» շքանշանով։ Այդ հաջողության մեջ իր համեստ բաժինը ուներ նաև հայ ժողովրդի արիասիրտ դուստրը՝ Օֆելյան։

Կիրովոգրադը և նրա շրջակա գյուղերն ու բնակավայրերը ազատագրելուց հետո դիվիզիայի հրամանատարությունը մարտերում առավել աչքի ընկած լավագույն մարտիկներից կազմեց մի պատգամավորություն, որը 1944 թվականի հունվարին Հայաստան եկավ զեկուցելու հայ ժողովրդին, նրա մարտիկների կատարած սխրագործությունների, նվաճած մեծ հաղթանակների մասին։

Պատգամավորության կազմում էր Օֆելյա Պետրոսյանը։

Հայաստանի աշխատավորությունն ամենուր դրկաբաց ընդունեց իր քաջարի զավակներին, որոնք սովետական մյուս ժողովուրդների զավակների հետ միասին

կրծքով պաշտպանեցին մեր Հայրենիքի ազատությունն ու անկախությունը։

409-րդ դիվիզիայի պատվիրակները, նրանց թվում և Օֆելյան, եղան հանրապետական գործարաններում, ֆաբրիկաներում, կոլտնտեսություններում, սովխոզներում, հիմնարկ-ձեռնարկություններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, ջերմ հանդիպումներ ունեցան աշխատավորության հետ, հպարտությամբ պատմեցին Կիրովոգրադյան փառապանծ միավորման անցած մարտական ուղու, հայ ժողովրդի պատմական նակազը կատարելու մասին։

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Սովետի նախագահությունը հատուկ ընդունելություն կազմակերպեց և դիվիզիայի պատվիրակներին պարգևատրեց արժեքավոր նվերներով։ Գվարդիայի բժշկական ծառայության լեյտենանտ Օֆելյա Պետրոսյանը պարգևատրվեց ոսկյա ժամացույցով։

Պատգամավորությունը 1944 թ. սեպտեմբերի 19-ին վերադարձավ ռազմաճակատ։ Ոգեշնչված հայ ժողովրդի առաջադրանքով, 409-րդ դիվիզիայի ռազմիկները 1944 թ. մայիսի 25-ին ռումինական Յասսի քաղաքի համար մղված մարտերում փայլուն հաջողությունների հասան։ Այստեղ ծանր վիրավորվում է Պետրոսյանը և ուղարկվում բուժվելու։ Հրամանատարությունը բարձր գնահատելով Պետրոսյանի կատարած ծառայությունները, նրան պարգևատրում է «Հայրենական պատերազմի առաջին աստիճան»-ի շքանշանով։

Պատերազմից հետո Օֆելյան վերադառնում է խաղաղ ստեղծագործ աշխատանքի։ 1952 թ. նա աշխատում է Հայաբնտրհրդի սիստեմում։ Օֆելյան այժմ «Տրուդ» արտելի սկզբնական պարտիական կազմակերպության քարտուղարն է։ Օֆելյայի կուրծքը զարդարված է երկու մարտական շքանշանով՝ Կովկասի պաշտպա-

նությանն և Սովետական Բանակի 30 տարին մեդալներով։

* * *

Մոսկվայի տակ ջախջախիչ հարված տանելուց հետո, հակառակորդը 1942 թ. ամռանը մեծ ուժեր կենտրոնացնելով և հարձակվելով ռազմաճակատի հարավարևելյան մասում, առաջ էր շարժվում դեպի Ստալինգրադ և Կովկաս։

Ստալինգրադի և Կովկասի համար մղվող մարտերում Կարմիր Բանակը կործանիչ հարված հասցրեց թշնամուն։ Շուտով ամբողջ աշխարհի ժողովուրդները ստալինգրադյան մեծ ճակատամարտի բոցերի մեջ տեսան ֆաշիզմի կործանման և Կարմիր Բանակի հաղթանակի շաուագունող արշալույսը։

Վոլգայի անառիկ ամրոց Ստալինգրադի պաշտպանությանը մասնակցում էին նաև բազմաթիվ հայ ռազմիկներ, կանայք ու աղջիկներ։ Հայրենիքի խիզախ ու սիրասուն դուստրերից մեկն էր Մոսկվայի բնակիչ, կոմերիտուհի Ասյա Քեկեջյանը։ Նա իր առաջին մարտական մկրտությունը ստացավ 1942 թվականի հուլիսի 23-ին, Խարկովի մարզի Վելիկոբուրլուցկի շրջանի «Սերի յար» սովխոզի ապատագրման ժամանակ։ Այստեղ նա վիրավորվում է ազդրից։ Դիմանալով սուր ցավերին, նա չի հեռանում մարտադաշտից և այդ վիճակում առաջին օգնություն է ցույց տալիս 14 վիրավոր մարտիկի ու հրամանատարի՝ նրանց դուրս բերելով մարտադաշտից։ Մարտի թեժ պահին Ասյան նկատում է, որ շարքից դուրս է եկել հրանոթներից մեկի անձնակազմի մեծ մասը, առանց վարանելու նա օգնության է հասնում, սկսում արկեր մատակարարել հրանոթ ականածիգ մարտիկին։ Հրանոթի ակտիվ կրակը թշնամուն նա է շպրտում։ Այս քաջագործության համար Քեկեջյանը պար-

գնահատվում է «Խիզախության համար» մեդալով։ Նույն զվարդիական հրետանային գնդում Ասյան արդեն մարտական փորձառությամբ մասնակցում է Ստալինգրադի պատմական ճակատամարտին։ Այդ մարտերում աչքի ընկնող ծառայությունների համար գնդի հրամանատարությունը Ասյա Քեկեջյանին պարգևատրում է «Մարտական ծառայությունների համար» և «Ստալինգրադի պաշտպանության համար» մեդալներով։ Ստալինգրադից հետո նա զվարդիական հրետանային գնդի հետ 1943 թ. հուլիսի 5-ից մինչև 10-ը մասնակցում է Օրյոլ-Կուրսկի ահեղ ճակատամարտին, թշնամու ուժեղ կրակի տակից դուրս է բերում 23 վիրավոր մարտիկի ու հրամանատարի, փրկում նրանց կյանքը։

Հմուտ սանիտարուհին Օրյոլ-Կուրսկի մոտ տեղի ունեցած ճակատամարտի տեղամասերից մեկում նկատում է, որ այրվում են սովետական երկու տանկ։ Արհամարհելով մահը՝ նա նետվում է դեպի տանկերը, կրակի բոցերի միջով բարձրանում նրանց վրա և ազատում կիսաուշաթափ ու արյունաքամ ութ տանկիստի։ Այս սխրագործության համար Ասյան պարգևատրվում է «Կարմիր Աստղ»-ի շքանշանով։

Քեկեջյանը որպես քաջասիրտ, հայրենասեր կոմերիտուհի ռազմաճակատում ընդունվում է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի շարքերը։

1943 թ. հունվարի 21-ին զվարդիական հրանոթային գնդի հրամանատար Իստրատովը Քեկեջյանի մասին ՀԿՊ Կենտրոնական Կոմիտեին գրել է. «Մենք հպարտանում ենք մարտում թշնամու դեմ քաջի պես կռվող անվախ Սովետական ժողովրդի դուստրով»[1]։

Ստալինգրադի հերոս պաշտպաններից է նաև սանիտարական հրահանգիչ Ասյա Կարապետյանը։ Նա իր

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 84, էջ 1։

ռուս մարտական ընկերների հետ միասին ռազմաճակատի առաջին գծում օգնություն էր ցույց տալիս վիրավոր մարտիկներին, կրակի տակից հանում նրանց, քույրական ջերմ հոգատարությամբ փաթաթում վերքերը և խնամում։ Կարապետյանը պարգևատրվել է «Կարմիր Աստղ»-ի շքանշանով, «Մարտական ծառայությունների», «Խիզախության համար» և «Ստալինգրադի պաշտպանության համար» մեդալներով։

* * *

Երևանի Բժշկական ինստիտուտի երիտասարդ ուսանողուհի Սուսաննա Զաքարյանը Կերչի հերոսական պաշտպաններից է։ Բժշկական ծառայության լեյտենանտի կոչումով, Սուսաննան 1941 թ. մեկնում է Ղրիմի ռազմաճակատ և Կերչի թերակղզում արյունահեղ մարտերի մեջ գտնվող 138-րդ հրաձգային դիվիզիայի 135-րդ առանձին բժշկա-սանիտարական գումարտակում նշանակվում է սանիտարական հրահանգիչ։ Այստեղ նա ձեռք է բերում մեծ փորձ և դառնում հմուտ բուժ. աշխատող։ Կերչում նա մեկ օրվա ընթացքում, ռմբակոծության ծանր պայմաններում, մարտադաշտից դուրս է բերում 24 վիրավոր մարտիկ, կապում նրանց վերքերը և հասցնում սանիտարական գնացքին՝ խոր թիկունք փոխադրելու համար։ Մարտերից մեկում Զաքարյանը ծանր վերք է ստանում, բայց այդ վիճակում փրկում է իրենից քիչ հեռու ընկած, արյունաքամ եղած, ռուս փոխգնդապետի։ Երախտապարտ փոխգնդապետն այդ չի մոռանում. ապաքինվելուց հետո, հիվանդանոցից նա շարունակ նամակներ է գրում իր կյանքը փրկող հայուհուն, «Շնորհակալություն Քեզ, քույր Սուսաննա, որ փրկեցիք իմ կյանքը,— գրում է նա իր նամակներից մեկում։— Յանկանում եմ, որ շուտով դուք էլ առողջանաք ու միասին նորից գնանք մարտադաշտ։

Այս նամակիս հետ ուղարկում եմ Ձեզ կարմիր ու սպիտակ վարդեր։ Նայեցեք այդ վարդերին, ու միշտ հիշեցեք, որ Ձեզ համար պատերազմից հետո նորից կբացվի գարուն, աղատ մարդկության երջանիկ գարունը, որի համար ֆաշիզմի դեմ մարտնչում ենք ես, դուք, միլիոնները։ Ու մեր արյան գնով ենք ձեռք բերելու այդ գարունը»[1]։

Մարտերում վիրավորված բժշկական քույր Զաքարյանն ակտիվ մասնակցություն է ունենում Ստալինգրադի հերոսական պաշտպանությանը։ Կատաղի կրակի տակ նա առաջին օգնություն է ցույց տալիս մարտիկներին։ Սուսաննան Ստալինգրադում երկրորդ անգամ վիրավորվում է և կորցնելով առողջությունը, այլևս հնարավորություն չի ունենում վերադառնալ մարտաշարք։

Հայրենիքը բարձր գնահատելով քաջարի դստեր ծառայությունները, նրա կուրծքը զարդարել է «Կարմիր Դրոշ»-ի, «Կարմիր Աստղ»-ի, «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճան»-ի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով։

* * *

Գերմանական զորքերը մեր երկրի վրա ուխտադրուժ հարձակման հենց առաջին օրերից իրենց հարվածներն ուղղեցին նաև դեպի Լենինգրադ։ Պատերազմի սկզբից Լենինգրադի մատույցներում մարտական գործողությունների մեջ մտան սովետական զորամասերը, աշխարհազորայինները, քաղաքի ողջ ազգաբնակչությունը։

Լենինգրադի մատույցներում հանդիպելով կատաղի դիմադրության, հակառակորդն ամեն միջոց գործադրելով, ցանկանում էր ընկճել և ծունկի բերել Հոկտեմբեր-

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 84, էջ 6։

յան ևակուացիայի օրերանը։ Լենինգրադի համար սկսվեց դրկանքներով, տառապանքներով և դժվարություններով լի մի շրջան։ Ո՛չ գերմանական 40 դիվիզիաների ու տանկերի կատաղի գրոհները, ո՛չ ցուրտը, ո՛չ էլ անթիվ դրկանքները ու հրետանային և օդային ռմբակոծությունները չսասանեցին, չկարողացան ընկճել Լենինգրադի հերոս պաշտպանների անկոտրուն կամքը։ Նրանք 900 օր հերոսաբար դիմացան թշնամու բլոկադային և հաղթեցին։

Լենինգրադի պաշտպանության ակտիվ մասնակից, ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին Լենինգրադի հերոս պաշտպանների մասին գրել է. «Յուրաքանչյուր նոր հարձակում, յուրաքանչյուր նոր ավիրված տուն, հրետակոծ, հնոջ, ծերունու բեկորներով ընկոտված յուրաքանչյուր նոր մարմին, դրկանքների, դժբախտությունների թերամանան, ցրտի ու մթի յուրաքանչյուր ժամ ոչ թե թուլացնում, այլ ամրացնում էին Լենինգրադի պաշտպանների, այսինքն հերոս քաղաքի զինվորական ու քաղաքացիական ամբողջ բնակչության կամքը՝ թշնամուն ետ մղելու համար»[1]։

Լենինգրադի հերոսական պաշտպանությանը մասնակցում էին նաև սովետական երկրի մեծ թվով արիասիրտ կանայք, որոնց թվում նաև արևելյան Հայաստանից տասնյակ հայուհիներ։

ՀԱՄԼԿՍՄ անդամներ՝ Սոֆյա և Ռուզաննա Լալայանները, 1941 թվականի հունիսին, լավագույն ցուցանիշներով ավարտելով Լենինգրադի Բժշկական ինստիտուտը, պատրաստվում էին մեկնել խաղաղ քաղաքացիական աշխատանքի, երբ սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը։

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 265, գ. 324, թ. 21

Լալայան քույրերը, դիմելով Լենինգրադի ռազմական կոմիտեին, մեկնեցին Կարմիր Բանակի շարքերը. նրանք ստացան բժշկական ծառայության ավագ լեյտենանտի կոչում և նշանակվեցին քաղաքը պաշտպանող հրաձգային գնդերից մեկի սանիտարական գումարտակում՝ որպես զինվորական բժիշկներ: Այդ հրաձգային գունդը Նովգորոդի ուղղությամբ, ռազմաճակատի գծին մոտենալու ժամանակ թշնամու կողմից ենթարկվում է ռմբակոծության: Լալայան քույրերը և բուժ. քույր Վերա Յակովլևան հասնելով ռմբակոծության վայրը, Պրիպոլակ կայարանում, տեղի բնակիչներից ձեռք են բերում սայլեր և հակառակորդի ուժեղ ռմբակոծության տակ վիրավոր մարտիկներին տեղափոխում են հոսպիտալ:

Գերմանական զորքերը մտնում են Պետերգոֆ և Լենինգրադի շրջակա գյուղերը. Ռուզաննա Լալայանն այդտեղ, մի խումբ ընկերների հետ միասին, ընկնում է շրջապատման մեջ:

Սակայն կոմերիտուհին չի հուսահատվում. նա իր ընկերների հետ որոնում է շրջապատումից դուրս գալու ուղիներ: Ամբողջ 10 օր նրանք անասելի տանջանքներ կրելով, անցնում են ճահիճների ու անտառների միջով և կարելով ռազմաճակատի գիծը, հասնում Լենինգրադ:

Ճանապարհին Ռուզաննան և նրա ընկերները սնվում էին տերևներով ու սունկերով: Նրանց ուժ ու արիություն էր տալիս Հայրենիքի սերը ու զինվորական պարտքի գիտակցումը:

Ռուզաննան նորից տեղափոխվում է նույն գնդի սանիտարական մասում, իսկ հետագայում՝ 189-րդ դիվիզիայի 100-րդ բժշկա-սանիտարական գումարտակում:

Ռուզաննա Լալայանն աշխատում է որպես վիրաբույժ: Նա օր ու գիշեր, առանց հանգստանալու կատարում է բարդ վիրահատություններ, մահվան ճիրաններից ազատելով շատ մարտիկների ու քաղաքա-

ցիներին: Ռուզաննան տաս օրվա ընթացքում մարտական դժվարին պայմաններում կատարում է ավելի քան 100 վիրահատություն[1]:

1942 թ. սեպտեմբերյան մի օր բժշկական ծառայության լեյտենանտ Ռուզաննա Լալայանը դեռնատիպ բլինդաժում վիրահատություն էր կատարում, երբ ներս են բերում ծանր վիրավորված Նիկոլայ Բոնդարևին և տեղավորում վիրահատման սեղանին: Նա շատ արյուն էր կորցրել: Նախքան վիրահատելը անհրաժեշտ էր նրան ուշքի բերել: Հայրենասեր Ռուզաննան իրենից վերցնում է 150 գրամ արյուն և ներարկում Նիկոլային: Նրան ուշքի բերելուց հետո կատարում է համապատասխան վիրահատում:

Բլոկադայի ծանր օրերին՝ 1942 թ. սեպտեմբերին, Ռուզաննա Լալայանն իր անձնվեր ծառայությունների համար արժանանում է «Մարտական ծառայությունների համար», իսկ նույն թվականի դեկտեմբերին՝ «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալներին:

Լենինգրադի ռազմաճակատի մի այլ բժշկա-սանիտարական գումարտակում էր ծառայում Ռուզաննայի քույրը՝ Սոֆյա Լալայանը, որը ռազմաճակատի առաջավոր գծում բժշկական օգնություն էր ցույց տալիս վիրավորներին:

Լենինգրադի բլոկադայի ծանր օրերին Լալայան քույրերը մարտերում իրենց դրսևորեցին որպես տոկուն և արի ռազմիկներ:

1942 թ. վերջին արդեն Ռուզաննա և Սոֆյա Լալայանները ծառայում էին բժշկա-սանիտարական հատուկ խմբում: Խմբի նպատակն էր ըստ կարիքի ամենուր օգնություն հասցնել սանիտարական գումարտակի բժշկական խմբերին:

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, բժշկական ծառայության լեյտենանտ Ռ. Լալայանի անձնական գործը:

1943 թվականին՝ Լենինգրադի բլոկադայի օրերին Լալայան քույրերը ընդունվում են Կոմսոմոլսկայան պարտեզի շարքերը. «Խնդրում եմ ինձ ընդունեք պարտեզի շարքերը, ցանկանում եմ մեռնել իբրև կոմսոմոլ»[1].— գրել է իր դիմումում Ռուզաննա Լալայանը:

Ռուզաննա և Սոֆյա Լալայաններին Լենինգրադի կառավարի մարտերում բժշկական օգնության համար Պուլկովոյի, Շլյուսելբուրգի տակ, Ռազլիվում, Ուրիցկում, Ստարայա Ռուսսայում և Ելգավայի (Միտավա) մարտերում վիրավորված բազմաթիվ մարտիկներին, որի համար Ռուզաննան պարգևատրվեց «Կարմիր Աստղ», իսկ Սոֆյան՝ «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճան»-ի շքանշաններով և «Լենինգրադի պաշտպանության համար»[2] մեդալով:

156-րդ բժշկա-սանիտարական գումարտակի բժշկական վաշտի հրամանատար, 2-րդ կարգի զինվորական բժիշկ Բենենսոնը Սոֆյա Լալայանի բնութագրում գրել է. «...Երկրորդ կարգի զինվորական բժիշկ Սոֆյա Լևոնի Լալայանը ծառայության ընթացքում իրեն դրսևորել է որպես բարեխիղճ և ճշտապահ մարտիկ: Տասն օրվա ընթացքում նա վիրահատության է ենթարկել 153 վիրավորի: Նա մեծ հեղինակություն է վայելում գումարտակում»[3]:

1944 թ. փետրվարին Լուգովոյի մոտ, վիրահատության սեղանի առաջ, մարտական պոստում հերոսաբար զոհվեց Հայրենիքի քաջ դուստր Սոֆյա Լալայանը, որը մինչև վերջին շունչը անբասիր կերպով ծառայեց Լենինգրադի պաշտպանների առաջավոր շարքերում: Իսկ

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, բժշկական ծառայության լեյտենանտ Ս. Լալայանի անձնական գործը:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

Ռուզաննան կորցնելով իր քրոջը, լցված անսահման վրեժով, շարունակեց անձնվեր աշխատանքը մինչև Հայրենական պատերազմի հաղթական ավարտը։

42-րդ բանակի գլխավոր վիրաբույժ պրոֆեսոր Ի. Ս. Բելաբորը հոկտեմբերի 10-ին Ռուզաննա Լալայանին գրած նամակում հայտնում է, որ «1947 թվականի մարտին վիրաբույժների ընկերությունում կարդացած իր «Լենինգրադի տակ մեծ հաղթանակի ժամանակաշրջանում վիրաբուժական ծառայությունները բանակում» զեկուցման մեջ հիշատակել է ռազմաճակատում աչքի ընկած անվանի վիրաբույժներին. «Դրանցից բացի,— գրում է պրոֆեսոր Բելաբորը,— հիշատակեցի Ձեզ և Ձեր զոհված քրոջը՝ Սոֆյային, որին ես լավ եմ հիշում և միշտ վերհիշում նրա հերոսական մահն իր պոստում»[1]։

1946 թ. բժշկական ծառայության լեյտենանտ Ռուզաննա Լալայանը Կարմիր Բանակից զորացրվում է։ Այժմ որպես վիրաբույժ նա աշխատում է Երևանի Տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի գիտա-հետազոտական ինստիտուտում։ Երիտասարդ գիտական աշխատողը 14 աշխատությունների հեղինակ է։

Բլոկադայի ծանր օրերին աչքի ընկավ նաև Լենինգրադի Բժշկական ինստիտուտի ուսանողուհի Կատյա Զմշկյանը։ Նա ծառայում էր առաջապահ ջոկատում և օգնում հարյուրավոր վիրավոր մարտիկների։

Գետնափոր հոսպիտալում, վիրահատման սեղանի առջև կանգնած էր Կատյա Զմշկյանը, երբ ներս բերեցին և սեղանի վրա դրուշորեն պառկեցրին մարտիկ Ալեքսանդր Կորնևին։ Վիրավորը արյունաքամ էր եղել։ Բժշկուհին անձնազոհությամբ իր արյունից ներարկում

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, բժշկական ծառայության լեյտենանտ Ս. Լալայանի անձնական գործը։

է վիրավորին, փրկում է երիտասարդ մարտիկի կյանքը։ Զմշկյանն իր բարեխիղճ աշխատանքի համար մի քանի անգամ պարգևատրվել է մարտական շքանշաններով։

* * *

Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում փառավոր մարտական ուղի է անցել Երևանի Պետական համալսարանի ուսանողուհի, բժշկական ծառայության ավագ լեյտենանտ, կոմերիտուհի Էմմա Հայրապետյանը, որը Կովկասյան նախալեռներից համառ մարտերի բովով հասել է մինչև Բեռլին։

Այն վիրավոր մարտիկները, որոնց օգնել և խնամել է Հայրապետյանը, երբեք չեն մոռանում նրան։

Վիրավոր մարտիկներից մեկը՝ Օնիկ Խաչատյանը Հայրապետյանին գրել է. «Այսուհետև քեզ՝ իմ կյանքի փրկիչ, համարում եմ իմ հարազատ քույրը։ Շնորհակալություն իմ թանկագին քույր Էմմա ջան»[1]։

Նա պարգևատրված է Մարտական ծառայությունների, Խիզախության, Վարշավայի ազատագրման և Հաղթանակի համար մեդալներով։

Նույն դիվիզիայի 400-րդ հրաձգային գնդի երրորդ դիմադրությունում է ծառայել սանիտարական դասակի հրամանատար Մարուսյա Հեքիմյանը։ Նա ծնվել է 1915 թ. Դոնի Ռոստովում։ Ավարտելով տեղի Շահումյանի անվան դպրոցը, 1935 թ. ընդունվում է Երևանի Բժշկական տեխնիկումը, որն ավարտում է 1938 թ. գերազանց գնահատականներով։ Նույն թվականին ճապոնական միլիտարիստները գինված հարձակում գործեցին սովետական տերիտորիայի վրա, Վլադիվոստոկի մոտ, Խասան լճի շրջանում։ Մարուսյան այդ օրերին կամավոր մեկնում է հեռավոր Արևելյան բանակ։ Ճապոնական միլի-

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 85, թ. 12։

տարիսանների ոտնձգությունները լիկվիդացիայի ենթարկվելուց հետո, Հեքիմյանը որպես բժշկական կետի վարիչ, Վլադիվոստոկում մնում է մինչև 1942 թ.: Փոքրված բուժակը Կովկասի հերոսական պաշպանության օրերին ստանում է նոր նշանակում և Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում մասնակցում է Կուբանի, Թամանի, Կերչի, Դրիմի և Լենինգրադի ազատագրման և գերմանական ֆաշիզմի վերջնական ջախջախման մարտերին:

1944 թ. օգոստոսին Հայկական Թամանյան դիվիզիան անցնելով Բուգ գետը, իր ուժերը կենտրոնացրել էր լենական Լյուբլին քաղաքի շրջանում: Զորամասերին առաջադրանք էր տրված շարժվել դեպի Վիսլա և պաշտպանական դիրքեր գրավել նրա ձախ ափին: Թամանյան հայկական դիվիզիայի հրետանավորները 1945 թ. հունվարի 2-ին մասնակցեցին այդ առաջադրանքների կատարմանը: Նրանց հետ էր նաև բժշկական ծառայության լեյտենանտ Մարուսյա Հեքիմյանը:

Վիսլայի ձախ ափին, հրանոթների որոտների, խլացուցիչ համազարկերի, մոլեգնող մարտերի բովում Հեքիմյանը անսրկլուղ կերպով շարժվելով թշնամու պաշտպանությունը ճեղքած զորքերի հետ, բարեխղճորեն կատարում է իր գործը, կրակի գծից դուրս բերելով 24 վիրավոր մարտիկ:

Վիրավորներին ժամանակին բժշկական առաջին օգնություն ցույց տալուց և նրանց հետագա բուժումը հեռանալուց բացի, Հեքիմյանը ուղղամիտներք էր հասցնում հրետանավոր մարտիկներին, որի համար նա պարգևատրվում է «Կարմիր Աստղ»-ի մարտական շքանշանով:

1945 թ. փետրվարի սկզբին Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիան հաղթական մարտերով հասավ Գերմանիա և մարտական առաջադրանք ստացավ

անցնել Օդեր գետը և ձախ ափին ստեղծել պաշտպանության հենակետ։ Առաջադրանքը հաջող կերպով կատարեցին հայ թամանցիները։

Փետրվարի 16-ին թշնամին ուժեղ հարձակում սկսեց դիվիզիայի զորամասերի վրա։ Նրա բոլոր գրոհները թամանցիները ետ շպրտեցին, չթողնելով թշնամուն մոտենալու հենակետին։

Հեքիմյանն առաջադրանք է ստանում՝ պատրաստվել ընդունելու վիրավոր մարտիկներին։ Զորս կողմը պայթող ականների, տեղատարափ հրաձգության և օդային ռմբակոծության տակ նա վիրավոր մարտիկներին բժշկական օգնություն է ցույց տալիս և տեղափոխում թիկունք։

Փետրվարի 17-ին Հեքիմյանը մի նոր ավելի դժվարին առաջադրանք է ստանում. շարժվող զորամասերի հետ անցնել Օդեր գետի ձախ ափը և այնտեղ կազմակերպել բժշկական օգնության դրծը։ Անցումը չափազանց դժվար էր, որովհետև թշնամին վերջին ճիգերն էր գործադրում պահպանելու իր դիրքերը։ Մարուսյան գնդապետին հանդիպում է երեք ռուս մարտիկների, որոնք կարևոր առաջադրանքով պետք է մակուլով անցնեին գետը։ Նա խնդրում է մարտիկներին, որ իրեն էլ վերցնեն։ Սակայն զինվորները նրան մերժում են։ Բայց երբ Մարուսյան նկատում է, որ նավակը հեռանում է ափից, իսկույն իրեն նետում է գետը՝ լողալով անցնելու։ Այս անգամ մարտիկներն ստիպված են լինում նրան վերցնել իրենց հետ։ Թշնամին սկսում է կրակել նավակի վրա, սակայն մարտիկները, նրանց հետ և Մարուսյան, պաշտպանական մարտով, բարեհաջող անցնում են գետի մյուս ափը։

Անվնաս հասնելով առաջադրված վայրը, բժշկական ծառայության լեյտենանտ Մարուսյա Հեքիմյանը մարտական ծանր պայմաններում խնամում ու բուժում է

150 վիրավոր մարտիկի։ Նա մեծ խրախուսություններ է կատարում նաև Բեռլինի գրավման ճակատամարտում և միավորման մարտիկների թվում արժանանում է Գերագույն Գլխավոր Հրամանատարության շնորհակալագրին և պարգևատրվում է «Կարմիր Աստղ»-ի երկրորդ շքանշանով։

Հայրենական պատերազմի հաշմանդամ Հեքիմյանը այժմ թոշակառու է։

Թամանյան դիվիզիայի բժշկա-սանիտարական գումարտակում աչքի ընկնող ծառայություններ կատարեց կոմերիտուհի Լյուսյա Ավագյանը։ Վտանգի ծանր պահին, նա դիրքից դիրք անցնելով, հավաքում էր վիրավոր ռազմիկներին։ Մի մարտի ժամանակ վիրավորվում է շարքային մարտիկ Դարուբյանը և անօգնական վիճակում երկար ժամանակ ընկած մնում գերմանացիների դիրքերի առջև։ Խաչաձև կրակը խանգարում էր մոտենալ վիրավորին։ Ավագյանն իր հետ վերցնելով անհրաժեշտ դեղորայք և վիրաբուժական գործիքներ, արհամարհելով մահը, դիշերը սողնող մտնում է մարտադաշտ և դիակների մեջ գտնում Դարուբյանին, խնամքով կապում է նրա վերքերը և մարտիկներ Ս. Սարգսյանի ու Կ. Հակոբյանի հետ միասին դուրս է բերում մարտադաշտից՝ փրկելով նրա կյանքը։

Ռազմաճակատում բժշկական ծառայության լեյտենանտ Լյուսյա Իստամանյանը, բժշկական քույր՝ Ղրիմի ազատագրման համար մղվող մարտերում հերոսաբար զոհված Լուսիկ Ասլանյանը և նրա մարտական ընկերուհիներ՝ Իսկուհի Հովհաննիսյանը, Հերմինե Կելեջյանը, Սիրանուշ Արևշատյանը, Գոհար Հովսեփյանը և մյուսները ոչինչ չէին խնայում վիրավորներին բժշկական օգնություն ցույց տալու համար։ Նրանք առաջավոր գծում և դաշտային հոսպիտալներում իրենց ուժերը և

գիտելիքները ի սպաս էին դնում վիրավոր ռազմիկների կյանքը փրկելու համար։

Բժշկական քույր Սիրանուշ Արեշատյանն անձնուրաց կերպով, խրամատից խրամատ անցնելով, առաջին օգնություն էր ցույց տալիս ռազմադաշտում ընկած վիրավոր մարտիկներին։ Թեժ մարտերից մեկի ժամանակ, հակառակորդի կրակի տակ նա վիրակապեց 17 վիրավոր ռազմիկի և նրանց մեծ մասին դուրս բերեց կրակի գծից։

Գոհար Հովսեփյանը Շամշադինի շրջանի Նավուր գյուղից էր։ Նախքան պատերազմը նա զբաղվում էր ուսուցչությամբ։ Մեկնելով ռազմաճակատ, նա դարձավ անխոնջ դիմելյան քույր։

1945 թ. մարտին ռազմաճակատից ստորաբաժանման հրամանատար, կապիտան Կոշևը Գոհարի ծնողներին ուղարկած նամակում գրել է.

«Մեր մարտիկներն ու հրամանատարները հարգանքով ու համակրանքով են վերաբերվում իրենց սիրելի Գոհարին։

Շամշադինցի այս աղջիկը զգալուն քույր է։ Նրա ջերմ, հոգատար վերաբերմունքը թեթևացնում է նույնիսկ ամենածանր վիրավորի ցավերը։

Ստորաբաժանման մեջ բոլորը գովեստով են խոսում Գոհարի մասին։ Նվիրված ու բարեխիղճ աշխատանքի համար նա շատ անգամ արժանացել է շնորհակալության։

Գոհարի ծնողները կարող են հպարտ զգալ իրենց, որ Հայրենիքի համար աճեցրել են այնպիսի դուստր, որին մարտիկները խիզախ աղջիկ են անվանում»[1]։

---

[1] «Շամշադինի կոլխոզնիկ», 8 մարտի 1945։

Բժշկական քույր Ելիզավետա Հովհաննիսյան

Բժշկական ծառայության մայոր
Իռլա Ջանջուտովա

* * *

Բազմաթիվ հայ բժշկուհիներ Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում խոշոր ծառայություններ են կատարել նաև ռազմա-ծովային նավատորմում։

Բժշկական ծառայության կապիտան Թամարա Ասլանյանի զինվորական ծառայությունը սկսվում է դեռևս 1939 թ.։ Այդ նույն թվականին էլ նա ընդունվում է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի շարքերը և նվիրվում ծովայինների բուժման պատասխանատու գործին։

Ասլանյանն իր մարտական գործունեությունը սկսում է Սևծովյան նավատորմի մի ավիացիոն դիմարտակում։ Նա 250 օր մասնակցում է Սևաստոպոլ քաղաքի հերոսական պաշտպանությանը, գտնվելով այն դյուցազունների շարքերում, որոնք աշխարհին զարմացրին իրենց տոկունությամբ։

Սևաստոպոլի պաշտպանության մարտերում աչքի ընկնող ծառայությունների համար հրամանատարությունն Ասլանյանին ներկայացնում է կառավարական պարգևի։ Նրա պարգևաթերթիկում գրված է՝ «Բժշկական ծառայության կապիտան Թամարա Ասլանյանը ծառայել է Սևծովյան նավատորմի 12-րդ ավիացիոն բաղայում, որը տեղավորված էր Սևաստոպոլ քաղաքում։ Հայրենական պատերազմի սկզբից մինչև Սևաստոպոլի պաշտպանության վերջին օրերը ընկ. Ասլանյանն իրեն ցույց տվեց որպես տոկուն, արի և Սովետական Հայրենիքին նվիրված հրամանատար։ Մատչուշենկո և Կոստանտինովսկայա ծովախորշի օդանավակայանների հրետանային դնդակոծման և ռմբակոծության ժամանակ նա հակաառակորդի կրակի տակ ռազմիկներին ցույց է տվել անհրաժեշտ բժշկական օգնություն։

Դեմանացիների կատաղի հարձակման օրերին Թամարա Ասլանյանն ակտիվորեն մասնակցել է վիրավոր-

ներին ռազմաճակատի առաջավոր գծից դեպի հարավ, ինչպես և Կովկաս էվակուացնելու գործին»[1],

Բժշկական ծառայության կապիտան Ասլանյանը Սևաստոպոլ քաղաքի պաշտպանության ժամանակ ցուցաբերած անձնազոհ ծառայություններին համար պարգևատրվել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճան»-ի շքանշանով և «Մարտական ծառայությունների համար» մեդալով։

Հայրենիքի առաջին իսկ կոչով բժշկական քույր Ելիզավետա Հովհաննիսյանը մեկնեց Կարմիր Բանակ, դարձավ ռազմա-ծովային նավատորմի բժշկական քույր։

Ելիզավետան ծնվել է 1918 թ. Նուխի քաղաքում։ Նա մեծ սեր էր տածում դեպի բժշկությունը։ 1935 թ. նա ընդունվում է Բաքվի Բժշկական տեխնիկումը, որն ավարտում է գերազանց գնահատականներով և աշխատանքի է անցնում Լենինի Ղարաբաղի ավտոնոմ մարզի Հադրութի հիվանդանոցում որպես մանկաբարձուհի։ Պատերազմը սկսվելուն պես Ելիզավետան թողնելով իր քաղաքացիական աշխատանքը, զինվորական ծառայության է մտնում Սևծովյան նավատորմում որպես բժշկական քույր։ Նա «Կոտովսկի» և «Լվով» սանիտարական նավերում անձնուրաց գործունեություն է հանդես բերում և վերոհիշյալ նավերով 36 անգամ ուղևորություն է կատարում Օդեսայից, Սևաստոպոլից, Կամիշ-Բուրունից, Կերչից վիրավորներ տեղափոխելով դեպի թիկունք։

Վիրավորների տեղափոխումը կատարվում էր շատ դժվարին պայմաններում. ֆաշիստները խախտելով Միջազգային Կարմիր Խաչի տարբերական կանոնները, ռմբակոծում էին սանիտարական տրանսպորտը։ Նրանք մարդկային խիղճը կորցրած՝ գնդակոծում ու ռմբակոծում էին վիրավորներին։

[1] ՀՊԳԿ արխիվ, ֆ. 270, գ. 65, թ. 1։

1941 թ. օգոստոսի 13-ին Սկանդովսկ—Օպեսա ճանապարհին «Կոտովսկի» սանիտարական նավը, որը գնում էր Կարմիր Խաչի դրոշով, հենթարկվեց ֆաշիստական գրոհիչ ինքնաթիռների հարձակմանը։ Թշնամու ինքնաթիռները ռմբակոծում էին անպաշտպան հիվանդանոցային նավը։ Բժշկական քույր Հովհաննիսյանը աչալուրջ կերպով հետևում էր տախտակամածի վրա տեղի ունեցող դեպքերին և ժամանակին օգնություն ցույց տալիս վիրավորներին։

Ամբողջ նավարկության ժամանակ, ռմբակոծության ծանր պայմաններում, Հովհաննիսյանը մոտ 200 վիրակապում է կատարում և 2000 վիրավոր տեղափոխում թիկունք[1]։

Բժշկական քույր Հովհաննիսյանը նախաձեռնող, գործունյա, բարեխիղճ աշխատող էր։ Այդ անձնվեր աշխատանքների համար հրամանատարությունը Հովհաննիսյանին պարգևատրել է «Մարտական ծառայությունների համար» մեդալով։ 1942 թ. հունիսին Սևաստոպոլում, առաջադրանքը կատարելիս, անձնվեր հայուհին գոհվեց քաջի մահով։

* * *

1942 թվականի հոկտեմբերին թշնամին խցկվել էր Կովկասի նախալեռները։ Այդ տեղ օրերին բժշկական դիտությունների թեկնածու, բժշկական ծառայության մայոր Ռոզա Զանջուտովան նշանակվում է № 4279 դաշտային ինֆեկցիոն հոսպիտալի պետ։ Նրա հոսպիտալը 46-րդ բանակի կազմում Կովկասյան նախալեռներից հասել է մինչև Զելենոլովսկիա։

Պատերազմի ծանր օրերին հոսպիտալի կազմակերպման ու գեկավարման գործում պարտիական Զան-

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, բժշկուհի քույր Ե. Հովհաննիսյանի պարգևաթերթիկը։

ջուտովան հանդես է բերում իսկական բոլշևիկյան կամք, կազմակերպական մեծ ունակություններ։ Նրա ղեկավարած հոսպիտալը բժշկա-սանիտարական անձնակազմի անբասիր աշխատանքի շնորհիվ դառնում է օրինակելի։ Այս մասին է վկայում 1943 թվականի մարտի 2-ին 46 բանակի սանիտարական բաժնի պետ, առաջին կարգի զինվորական բժիշկ Զևպելևի տված բնութագիրը, որտեղ գրված է. «Զինվորական երկրորդ կարգի բժիշկ Ռ. Ս. Զանջուտովան աշխատելով որպես № 4279 ինֆեկցիոն հոսպիտալի պետ, հոսպիտալի տեղատարման և նրա աշխատանքների ծավալման ընթացքում ցուցաբերել է բացառիկ կոմպետենտություն, աչքի ընկնող կազմակերպչական ընդունակություն և ճկուն օպերատիվություն։ Հիվանդներին ընդունելու առաջադրանք ստանալով, նա արագորեն վերակառուցում է հոսպիտալը և հմտորեն կազմակերպում վիրավորների ընդունումն ու նրանց բուժման գործը։ Նրա համար չկար դիշեր ու ցերեկ, մինչև որ չէր ստեղծում վիրավորների համար մաքսիմալ պայմաններ»[1]։

Ռազմաճակատում Ռոզա Զանջուտովան աչքի է ընկնում ոչ միայն որպես լավագույն կազմակերպիչ, լավ վարչական աշխատող, այլև հմուտ բժիշկ։

Մարտական պայմաններում, նահանջող հիտլերականները մարդկային մեծ կուտակումների շրջանում թողնում էին ինֆեկցիոն-վարակիչ հիվանդությունների օջախներ։ Բժշկական անձնակազմից պահանջվում էր հատուկ զգոնություն և անխոնջ աշխատանք։ Ռոզա Զանջուտովայի ղեկավարած հոսպիտալի բժշկական անձնակազմի համառ ու ջանասեր աշխատանքի շնորհիվ կանխվում են վարակիչ հիվանդությունները և փրկվում մեծ թվով մարդկային կյանք։ Այդ աշխատանքներում

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, բժշկական ծառայությունների մայոր Ռ. Զանջուտովայի անձնական գործը։

հոսպիտալի պետի մարտական օգնականներն էին հանդիսանում ռուս բժշկական քույրեր Իվժիկովան, Կուլեշովան, վրացուհի բժշկական ծառայության մայոր Մդիվանին, հրեա Ռոզա Լվովնան, հայուհի բժշկական քույր Երզինկյանը, օսեթ Տեխիշևին, մոլդավուհի Պորտկոն, ադրբեջանուհի Սրասովան։

Հոսպիտալի աշխատանքներն օրինակելիորեն ղեկավարելու համար բժշկական ծառայության մայոր Ջանջուտովան պարգևատրվել է «Կարմիր Աստղ»-ի, «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճան»-ի շքանշաններով ու մի շարք մեդալներով, իսկ մի շարք քաղաքների ազատագրման և գրավման ժամանակ, մարտական պայմաններում վիրավոր մարտիկների բուժման գործը բարձր հիմքերի վրա դնելու համար Գերագույն Գլխավոր հրամանատարության կողմից արժանացել է 18 շնորհակալագրի։

Պատերազմից հետո Ռոզա Ջանջուտովան ռազմաճակատում իր հավաքած նյութերի հիման վրա գրել է «Սովետական բժշկության փորձը Հայրենական Մեծ պատերազմում 1941—1945 թվականներին» աշխատությունը, որը 1948 թ. կոնկուրսում արժանացել է համամիութենական մրցանակի։

Ռոզա Ջանջուտովան այժմ բժշկական գիտությունների դոկտոր է և աշխատում է Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության կուրորտոլոգիայի գիտա-հետազոտական ինստիտուտում որպես կուրորտային ռեսուրսների ուսումնասիրման բաժնի ղեկավար։ Նա 48 գիտական աշխատությունների հեղինակ է, որից 17-ը նվիրված են Հայաստանի կուրորտային ռեսուրսների ուսումնասիրությանը։

Երևանի Բժշկական ինստիտուտի ասպիրանտ, բժշկական ծառայության լեյտենանտ Շողիկ Պապոյանը, երբ 1943 թվականին մեկնեց ռազմաճակատ, 11-րդ բանակի

հրաձգային դիվիզիայի բժշկա-սանիտարական գումարտակում նշանակվեց վիրաբուժական բաժանմունքի օրդինատոր և մասնակցեց Վնտկա քաղաքի (Բելոռուսիա) ազատագրման համար մղված մարտերին: Մարտերը կատաղի բնույթ էին կրում, բժշկական անձնակազմն աշխատում էր չափազանց լարված պայմաններում. երիտասարդ բժշկուհին վիրահատության սեղանից չէր հեռանում: Կրիտիկական էր վիրավոր մարտիկներից մեկի դրությունը: Անհրաժեշտ էր ծնկից կտրել նրա ոտքը: Բժշկուհին խորհրդակցում է ավագ վիրաբույժի հետ: Դա ամենքին մտահոգության մեջ էր դցել, մանավանդ որ վիրավոր երիտասարդը ֆեսերոլիստ էր: Ոտքի հեռացման վտանգը դգում էր նաև մարտիկը: Նա հուսահատ վիճակի մեջ էր: Պապոյանը լավ էր հասկանում այդ և մտածում էր անպայման փրկել մարտիկի ոտքը: Հայրենասեր բժշկուհին գործադրելով իր բոլոր գիտելիքներն ու հմտությունը, իր անմիջական հսկողության տակ պահելով վիրավորին, առանց ամպուտացիայի, կարճ ժամանակամիջոցում բուժում է նրան:

Ուշադիր վերաբերմունքով և հմտությամբ Պապոյանը շատ մարտիկների կյանք է փրկել: Նրա հացնով բազմաթիվ նամակներ էին ստացվում ռազմաճակատներից ու թիկունքից, որոնց մեջ բարձր գնահատական էին տալիս Շուլիկի աշխատանքին, հենց իրենք՝ բուժված ռազմիկները: Կարմիրբանակային Ենյատերովը Պապոյանին ուղարկած իր նամակում գրել է. «... Ես այժմ լավ եմ զգում ինձ, վերքս լավացել է, գրում եմ Ձեզ ռազմաճակատի առաջավոր գծից, շատով կսկսվի մարտը, ցանկանում եմ մարտից առաջ շնորհակալություն հայտնել Ձեզ: Դուք փրկեցիք իմ կյանքը: Ցանկանում եմ Ձեզ առողջություն և հաջողություն հետագա աշխատանքներում»[1]:

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 67. թ. 1։

Բժշկուհի Պապոյանը Կարմիր Բանակի շարքերում մասնակցում է Բրյանսկ, Ուսնեչա, Վլադիմիր-Վոլինսկի, Լյուբլին քաղաքների և Զելոսլովակիայի մայրաքաղաք Պրագայի ազատագրմանը, ինչպես նաև Դրեզդեն, Կոստրուս ու Բեռլին քաղաքների գրավման մարտերին։

Այս ծառայությունների համար հրամանատարության կողմից Պապոյանը պարգևատրվում է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճան»-ի և երկու «Կարմիր Աստղ»-ի շքանշաններով։ Բժշկական ծառայության ավագ լեյտենանտ Պապոյանը հաղթանակից հետո շարունակում և ավարտում է Երևանի Բժշկական ինստիտուտի ասպիրանտուրան, պաշտպանում դիսերտացիա և ստանում բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան։ Այժմ նա աշխատում է Երևանի Բժշկական ինստիտուտում առողջապահության կազմակերպման և բժշկագիտության պատմության ամբիոնում որպես դոցենտ։

Հայ ժողովրդի արժանի դուստրերից են նաև բժշկական ծառայության կապիտան Աշխեն Իգիթխանյանը և առաջին կարգի զինվորական բժիշկ Նորա Ալեքսիսյանը։ Նրանք 1941 թ. գերազանց գնահատականներով ավարտելով Երևանի Բժշկական ինստիտուտը, Հայրենիքի առաջին իսկ կոչով մեկնեցին Կարմիր Բանակ։

Աշխենը վիրաբույժ էր, իսկ Նորան՝ թերապևտ։ 1943 թ. ապրիլին Կուբանի Աբինսկ կայարանից ոչ հեռու մղվող մարտերում ծանր վիրավորվել էր մարտիկ Վասիլի Լերնդևը։ Նրա աջ ոտքը ծանր հարվածից մեծ վնասվածք էր ստացել։— Պետք է կտրել,— այդպիսի եզրակացության էին եկել վիրաբույժները, որովհետև վիրահատման ենթակա մասը «մահացել էր»։

Սովետական ռազմիկի ոտքի բուժման միտքը հուզում է երիտասարդ վիրաբույժ Իգիթխանյանին։ Նա գնում է վիրքը և մեծ ճիգեր թափելով՝ գտնում ճիշտ

բուժման հնարավորությունը և փրկում մարտիկի ոտքը։ Իգիթխանյանը նույն մեթոդով փրկում է նաև մարտիկ Իվան Միխայլչենկոյի «մահացած» ձեռքը։ «Ես որոշեցի փրկել Միխայլչենկոյի ձեռքը,— պատմել է այդ մասին Աշխենը.— իրոք երկար սանտիմետր վիրահատելով փչացած անոթը, վերականգնեցի։ Հինգ օրվա անձնական ղընոնումներս հաստատեցին, որ «մահացած» ձեռքը փրկված է»[1]։

Աշխենի նման խիզախ ու անվեհեր ռազմիկ էր բժշկական ծառայության կապիտան Նորա Ավետիսյանը։ Նա մի անգամ դաշտային հոսպիտալում մենակ էր, երբ «Յունկերսների» մի մեծ խումբ իրար հետևից չորս հարձակում գործեց, թափելով արկերի ու ռումբերի տարափ։ Այդ ժամանակ գերմանացիների կողմից հոսպիտալը ենթարկվեց նաև հրետանային ռմբակոծման։ Թշնամու հրետանային արկի հարվածից թռավ հոսպիտալի տանիքը։ Հիվանդանոցի շուրջը պայթող արկերից գլորվում էր գետինը, դուրս են գալիս լուսամուտի շրջանակները, դռները, իսկ հիվանդները կրկին վիրավորվում են մի քանի անգամ։

Նորան այդ վտանգավոր իրադրության պայմաններում հանդես է բերում բացառիկ արիություն։ Նա գլորկելով հիվանդներին տեղափոխում է ռմբապաստարան, փրկում շատերի կյանքը, իսկ այդ պահին ռմբապաստարանում, առանց շփոթվելու բուժքույր Տապրովայի օժանդակությամբ Աշխեն Իգիթխանյանը հանդուն կերպով վիրահատում էր որովայնից ծանր վիրք ստացած դաղստանցի Աբդուլաև Գաջին։

Հայկական Հեռագրական Գործակալության թղթակիցը Կուբանի մարտերում ականատես լինելով Իգիթխանյանի և Ավետիսյանի անձնազոհ աշխատանքին, նրանց մասին գրել է. «Այդ համեստ աղջիկներն արդեն

[1] ՀՊԿԿ արխիվ, ֆ. 270, գ. 21, թ. 3։

անցել են մարտական լուրջ դպրոց և պատերազմական կյանքի փորձությունների հարստացրել իրենց գիտական պրակտիկան։ Հայ ժողովրդի այդ դաստրների համեստությունն ու առաքինությունը այսօր Հայրենական պատերազմի կրակ ու բոցում նոր փայլ է ստացել»[1]։

Աշխեն Իգիթխանյանը Կովկասյան նախալեռներից դաժան մարտերով հասավ մինչև Գերմանիա, մասնակցեց Քյոնիգսբերգի և Բեռլինի գրավման մարտերին, իր անբասիր ծառայությունների համար պարգևատրվեց «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճան»-ի շքանշանով ու մարտական մի շարք մեդալներով։

Աշխենի մարտական ընկերուհի Նորա Ավետիսյանը Կարմիր Բանակի շարքերում անձնուրացաբար ծառայեց մինչև պատերազմի վերջը՝ իր մարտական գործունեությունն ավարտելով Պրագայում։ Նա պարգևատրված է «Կարմիր Աստղ»-ի և «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճան»-ի շքանշաններով, «Խիզախության համար» և այլ մեդալներով։

Այսպես անձնվիրաբար ծառայեցին Երևանի Բժշկական ինստիտուտի ասպիրանտները։ Նրանք պատերազմից հետո վերադարձան Հայրենիք և ներկայումս զբաղվում են գիտական աշխատանքով։

Աշխեն Իգիթխանյանն այժմ աշխատում է Երևանի Տրավմատոլոգիայի և Օրթոպեդիայի գիտա-հետազոտական ինստիտուտում, իսկ Նորա Ավետիսյանը՝ Երևանի Բժշկական ինստիտուտի սանիտարական-հիգիենիկ թերապիայի ամբիոնում որպես ասիստենտ։ Նրանք երկուսն էլ խաղաղ ստեղծագործ աշխատանքի պայմաններում նույնպես առաջավորներ են։

* * *

Բժշկական ծառայության լեյտենանտ Շուշիկ Ասատրյանն իր մարտական մկրտությունը ստացավ Կովկա-

[1] ՀՊԳԿ արխիվ, ֆ. 270, գ. 26, թ. 5։

սի պաշտպանության մարտերում։ Ասատրյանը ծնվել է 1909 թ. և դեռևս վաղ հասակից աշխատանքի է անցել սկզբում Լենինականի, ապա Կիրովականի տեքստիլ գործարաններում և աչքի ընկել որպես առաջավոր բանվորուհի։

Առաջավոր բանվորուհու համար սովետական երկրում միշտ էլ բաց են եղել ուսման դռները։ Ասատրյանը աշխատելու հետ միևնույն 1928 թ. սովորում և ավարտում է Լենինականի երկրորդ աստիճանի պարտիական դպրոցը, իսկ 1932—1935 թվականներին նաև Անդրկովկասի Պարտիական համալսարանը։ Այդ տարիներին նա կոմերիտական ղեկավար աշխատանքի է առաջ քաշվում, ընտրվում է Կոտայքի ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար, իսկ որոշ ժամանակից հետո նույն պաշտոնով փոխադրվում է Դիլիջան։

Ասատրյանը շատ էր ցանկանում բժիշկ դառնալ և ահա այդ նպատակով նա 1937 թ. փոխադրվում է Բաքու և ընդունվում տեղի բժշկական տեխնիկումը։

Երբ սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը, Ասատրյանն անմիջապես մեկնում է Կարմիր Բանակ և նշանակվում № 1935 էվակո-հոսպիտալում որպես օպերացիոն քույր։ Բալց թիկունքային աշխատանքը նրան չի բավարարում, նա բուռն կերպով ձգտում է դեպի ռազմաճակատ։ Շուտով իրականանում է Շուշիկի ցանկությունը։

1942 թվականի ամռանը, Հյուսիսային Կովկասի պաշտպանության օրերին, Ասատրյանն արդեն գործող բանակում էր, մեծ հոգատարությամբ խնամում էր վիրավոր մարտիկներին։ Հոկտեմբերին Սուխումի—Կուտայսի լեռնանցքում՝ անտառապատ և լեռնոտ ճանապարհի երկու կողմերում, կատաղի մարտեր էին մղվում։ Գերմանացիները փակել էին ճանապարհները։ Վիրավոր մարտիկներն ընկել էին շրջապատման մեջ։ Զնայած

այդ ծանր պայմաններին, բժշկա-սանիտարական մասի փոքրաթիվ կոլեկտիվը, որի շարքերում ծառայում էր Ասատրյանը, քաղաքացիական կոմիսարի մասնակցությամբ, կարմիր պարտիզան, բժշկական ծառայության մայոր Նատալիա Թեոդորովնա Պոդուշկո-Դուբրովսկայայի ղեկավարությամբ, առանց հուսահատվելու աշխատում էին դիշեր ու ցերեկ, մինչև որ շրջապատումից դուրս բերեցին վիրավորներին և էվակուացրին թիկունք: 1943 թ. Սուխումի լեռնանցքում Ասատրյանը վիրավորվում է, բայց չի հեռանում զորամասից և շարունակում է մարտական դժվարին պատասխանատու առաջադրանքներ կատարել:

Մի մարտից հետո հրամանատարն առաջարկում է բոլոր միջոցները գործադրել և ռազմաճակատից դուրս բերել կրծքից ծանր վիրավորված, երկար ժամանակ քարերի մեջ անօգնական ընկած ռազմիկ Ազիզբեկյանին: Չնայած խիստ վտանգավոր դրությանը, Ասատրյանն իր վրա է վերցնում այդ առաջադրանքի կատարումը: Նա արհամարհելով թշնամու ուժեղ կրակը, սողնող առաջ շարժվելով հասնում է վիրավորին, առաջին օգնությունը ցույց տալուց հետո դուրս է բերում ռազմադաշտից և փրկում նրա կյանքը:

Իր դասակցիկ և անձնուրաց աշխատանքով բժշկական ծառայության լեյտենանտ Շուշիկ Ասատրյանը օրինակ էր ծառայում շատ ընկերների համար: Նա իսկական հայրենասեր ռազմիկ էր, իր ուժերն ու գիտելիքները չէր խնայում հաղթանակի համար: Բուժաշխատանքների հետ միասին պարտության անդամ, զորամասի պարտկազմակերպիչ Շուշիկը ակտիվ հասարակական-պարտիական աշխատող էր: Նա ամեն կերպ ձգտում էր նաև խնայել ու տնտեսել սովետական գույքը, որպեսզի պատերազմի սուղ պայմաններում ոչ մի վիրավոր չզգա որևէ բանի կարիք:

Շուշիկը 7000 մետր գործածված բինտը լվացել, մաքրել, վերանորոգել և նորից գործածության մեջ էր դրել, որի համար հրամանատարության կողմից արժանացել էր շնորհակալության ու խրախուսանքի։

Բժշկական ծառայության լեյտենանտ Շուշիկ Ասատրյանն իր մարտական գործողությունները ավարտեց Ավստրիայում՝ 1945 թ.։

Սովետական կառավարությունը բարձր գնահատելով նրա ծառայությունները, Ասատրյանին պարգևատրեց կրկնակի «Կարմիր Աստղ»-ի շքանշանով և Բելգրադի ազատագրման, Բուդապեշտի, Վիեննայի գրավման ու Հաղթանակի համար մեդալներով։ Պատերազմից հետո Ասատրյանը վերադառնալով հայրենիք՝ նույն անձնվիրությամբ աշխատում է նաև հետպատերազմյան տարիներին։ Նա այժմ աշխատում է Երևանի քաղաքային Սովետի տեղարդ վարչության կարի անհատական պատվերների երկրորդ ֆաբրիկայում որպես կարի պատվերների բաժնի վարիչ և պարտիական կոմիտեի քարտուղար։

«Կարմիր Աստղ»-ի շքանշանակիր, բժշկական ծառայության կապիտան Լյուսյա Ասրյանը Թամանյան հայկական հրաձգային 89-րդ դիվիզիայի բժշկա-սանիտարական անձնակազմում լավագույն սպաներից էր։ Նա փրկել է տասնյակ վիրավորների կյանքը։

Դիվիզիայի 400-րդ գնդի հրամանատար, փոխգնդապետ Դանիել Հակոբյանը ծանր վիրավորվելով՝ խնամվեց և բուժվեց Ասրյանի հոգատար հսկողությամբ։ Փոխգնդապետը զորամաս վերադառնալու օրը երախտագիտաբար իր շնորհակալության առաջին խոսքն ուղղելով Ասրյանին՝ գրել է.

«Իմ թանկագին քույր Լյուսյա, կանցնեն պատերազմի այս ահեղ ու փոթորկալի օրերը, այն ժամանակ մենք իրարից հեռու կլինենք՝ մեր հարազատ օջախնե-

բում, մեր ընտանիքի անդամների մոտ, բայց իմ հիշողության մեջ միշտ կմնա ձեր բարի դեմքը, երախտապարտ կմնամ Ձեզ, հիշելով, որ Դուք օր ու գիշեր անքուն խնամք էիք տանում Ձեզ անծանոթ մի սպայի փրկելու համար, հիշելով, որ գիտակցությունս կորցրած պահին սառը ջրի կաթիլները դուք էիք ցողում իմ շուրթերին։

Հաջողություն և երկար տարիների կյանք եմ ցանկանում Ձեզ»[1]։

Աշխեն Վիրաբյանը դեռ չէր բոլորել 19 տարին, երբ թողեց ուսանողական նստարանը և, հայրենիքը պաշտպանելու ջերմ ցանկությամբ, մտավ Կարմիր Բանակի շարքերը, որպես վիրաբուժական քույր։

Նա սան-դումարտակում պատերազմի սկզբի օրից իրեն դրսևորեց որպես անձնազոհության փայլուն օրինակ, նա ոչ միայն բժշկական առաջին օգնություն էր ցույց տալիս վիրավոր ռազմիկներին, այլ, իր արյունը չխնայելով հայրենիքի զավակներին, դարձավ դոնոր։

Դոնորության համար մղված մարտերում ծանր վիրավորվել էր Իվան Սերեբրյակովը, որի փրկությունն արյուն ներարկելու մեջ էր։ Սան-դումարտակում արյուն չկար։ Աշխենը առաջարկեց իր արյունը և փրկեց հրամանատարի կյանքը։

Այդ դեպքից հետո Աշխենը փրկեց ևս երեք ուրիշ ծանր վիրավորների կյանք։

Աշխենի կատարած անձնազոհության մասին ռազմաճակատից Նինա Սոլոմանովան գրել է.— «Հայ աղջկա այդ անձնվիրությունն ու հայրենասիրությունը հիացրել է № բժշկա-սանիտարական դումարտակի անձնակազմին»[2]։

---

[1] «Մարտական աստղ», 12 մարտի 1947։

[2] «Սովետական Հայաստան», 29 հոկտեմբերի 1943։

1944 թ. վերջերին Արևելյան Պրուսիայում կատաղի մարտերից մեկում գլխից ծանր վիրավորվում է ռազմիկ թուրքմեն բանաստեղծ Զարի Աշիրովը: Նա ուշաթափ, անօգնական վիճակում ընկած էր ռազմադաշտում:

Ահա կրակի տարափի տակ սողալով նրան է մոտենում «Կարմիր Աստղ»-ի շքանշանակիր, բժշկական ծառայության լեյտենանտ Նինա Սաղումյանը: Բժշկական առաջին օգնությունը ցույց տալով նրան, սանիտարների օգնությամբ տեղափոխում է դաշտային հոսպիտալ:

Մի քանի օր անց, վերականգնելով կորցրած գիտակցությունը, Զարի Աշիրովը հետաքրքրվում է, թե ալն ով էր, որ վտանգի ենթարկելով կյանքը, փրկեց իրեն՝ հրամանատարին: Բայց թուրքմեն բանաստեղծի փրկարարը գտնվում էր արդեն հեռու, ռազմադաշտի առաջին գծում:

1959 թ. հունվարին Թուրքմենստանի «Թոկմակ» ժուռնալի խմբագիր Զարի Աշիրովը գալիս է Երևան՝ մասնակցելու Հայաստանի գրողների IV համագումարին: Նա հանդես գալով բարեկամության երեկոյին՝ կարդում է ռազմաճակատում իր փրկարար Նինային նվիրած բանաստեղծությունը, որ նա հրատարակել էր դեռևս 1950 թ. դեկտեմբերի 23-ին Հայաստանի Սովետական գրողների միության օրգան «Գրական» թերթի № 47-ում: Նա գրում է.

Ոչ մի կաթիլ ջուր տափաշշիս մեջ,
Արյունն էր հոսում իմ դեմքին անվերջ,
Մեր շուրջը՝ կրակ, մեր շուրջը՝ շաչյուն,
Կատաղի հողմն էր հանդում, փչում:

. . . . . .

Չեմ հիշում ես դեմքը քրոջական,
Անունը նրա հիշում եմ սակայն,

«Ես հայուհի եմ, անունս — Նինա»
Կապեց նա վերքս և, հետո... դնաց:
Ո՞ւր ես դու Նինա, ո՞րտեղ քեզ գտնել,
Պատրաստ եմ ես քեզ, ամեն տեղ փնտրել:

Նա հենց Երևանում էլ անսպասելիորեն հանդիպեց Նինա Սողոմյանին, որն այժմ աշխատում է Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրությունում:

14 տարի անց Աշիրովը հանդիպելով իր կյանքը փրկողին, արդեն իր մտերիմ բարեկամին, երախտապիտորեն հայտնում է իր խորին շնորհակալությունը:

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում մեծ ծառայություններ են կատարել նաև բժշկական ծառայության մայոր, «Կարմիր Դրոշ»-ի և «Կարմիր Աստղ»-ի շքանշանակիր Սոֆյա Գրիգորյանը (Մոսկալենկոն), «Կարմիր Աստղ»-ի շքանշանակիր, բժշկական ծառայության կապիտան Մարգարիտա Մելիք-Փարսադանյանը, բժշկական ծառայության մայոր Փառանձեմ Ավետիքյանը, բժշկական ծառայության կապիտաններ՝ «Կարմիր Աստղ»-ի շքանշանակիրներ՝ գվարդիական Վարվառա Վելիկանյանը, Թամարա Զոլախյանը, Սիրուշ Հովհաննիսյանը, բժշկական ծառայության լեյտենանտներ Լենա Սարգսյանը, Լյուսյա Փոխիկյանը, Նինա Բեբլեկչյանցը, բժշկական քույրեր Ոսկեհատ Հովհաննիսյանը, Լուսիկ Արզումանյանը, և շատ ուրիշներ, որոնք դժվարին պայմաններում չխնայելով իրենց ուժերը, իրենց կյանքը, փրկում ու պահպանում էին սովետական ռազմիկներին:

ԹՇՆԱՄՈՒ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Հայրենիքի նկատմամբ սովետական ժողովրդի անսահման սերը Հայրենական պատերազմի հենց սկզբից վառ կերպով դրսևորվեց նաև թշնամու թիկունքում ծավալված համաժողովրդական պարտիզանական պայքարում:

Սովետական Հայաստանի անսահմանորեն նվիրված բազմազգ ժողովրդի զավակները պատերազմի օրերին թշնամուն ոչնչացնում էին ոչ միայն ռազմաճակատում, այլև նրա թիկունքում: Նրանք ամենուրեք ոչնչացնում էին թշնամու կենդանի ուժը, պայթեցնում պահեստները, երկաթուղիները, կամուրջները, վիթխարում, խափանում հեռագրական ու հեռախոսային կապը: Պարտիզանները անհրաժեշտ տեղեկություններ էին հաղորդում սովետական զորքերին:

Թշնամու թիկունքում գործող բազմաթիվ պարտիզանական ջոկատներում մարտնչում էին նաև հայ ժողովրդի զավակները:

Սովետական բազմազգ ժողովրդի հաղթարավոր զավակներ սերանքների անկրկնելի օրինակներ ցուցաբերեցին թշնամու թիկունքում:

1942 թ. հուլիսին, երբ ֆաշիստական բարբարոսները ներխուժեցին Վորոշիլովգրադի (Լուգանսկ) մարզի Կրասնոդոն փոքրիկ քաղաքը, տանջանքների ու կախաղանների այդ մղձավանջային օրերին, Կրասնոդոնի Լենինյան Կոմերիտմիության տանները կազմակերպեցին ընդհատակյա «Երիտասարդ գվարդիա» կազմակերպությունը, որի անունը հռչակվել է ամբողջ աշխարհում: Այդ կազմակերպության անդամներից էին նաև հայ ժողովրդի խիզախ զավակներ Ժորա Հարությունյանցը և Մայա Պեգլիվանովան (Փահլևանյան):

Մայան ծնվել է 1925 թվականի մայիսի 20-ին, Դոնի Ռոստովում: Զորս տարեկան հասակում Մայան զբաղվում է հորից և մեծանում ու դաստիարակվում է մոր՝ Աննա Վասիլևնայի խնամքի տակ: Մայան 9-րդ և 10-րդ դասարանում սովորելիս Կրասնոդոնի մոտ գտնվող Պերվոմայկա ավանի միջնակարգ դպրոցի կոմերիտական կազմակերպության քարտուղարն էր: Այդ կազմակերպության անդամներից 17-ը գերմանական զավթիչների



«Երիտասարդ գվարդիա» ընդհատակյա կազմակերպության անդամ Մարյա Պետլիվանովա (Փահլևանյան)

Պարապանուշի Հերմինե Թադիրոսյան (Սաշկա)



դեմ պայքարի ընթացքում դարձան «Երիտասարդ գվարդիա» կազմակերպության անդամներ։

Մայան «Երիտասարդ գվարդիա» ընդհատակյա կազմակերպության «Հնդյակի» ղեկավարն էր, իսկ հընդյակի ղեկավար նշանակում էին միայն ամենահամարձակ ու վճռական ընկերների։ Նա Ուլյանա Գրոմովայի հետ միասին գրեց հակաֆաշիստական առաջին թռուցիկը, կարգավորեց թռուցիկների տարածումը և կյանքը վտանգի ենթարկելով, այն տարածեց քաղաքում և շրջակա գյուղերում։

Մի անգամ շուկայում Մայան ամբողջ կապոց թռուցիկներ տվեց կարկանդակ վաճառող մի կնոջ, որը ոչինչ չկասկածելով, շուտով կարկանդակի հետ տարածեց։

Թռուցիկներում երիտասարդ հայրենասերները կոչ էին անում սովետական մարդկանց պայքարել ֆաշիստական օկուպանտների դեմ՝ հանուն վերջնական հաղթանակի։ Մայան «Երիտասարդ գվարդիա» ընդհատակյա կազմակերպության մեջ էր ներգրավում հուսալի ու անձնազոհ շատ երիտասարդների։ Համարյա թե չի եղել մի գործողություն, որի մեջ ակտիվ մասնակցություն չունենար Մայան։

1943 թ. հունվարի 11-ին մատնիչների միջոցով գեստապոն ձերբակալում է «Երիտասարդ գվարդիայի» անդամներին, ծանր խոշտանգումների ենթարկում, փորձելով գաղտնիքներ կորզել նրանցից, բայց հերոս կոմերիտականները ոչինչ չեն հայտնում, հավատարիմ են մնում իրենց տված երդմանը։

Գեստապոյի արյունոտ մագիլների մեջ էր գտնվում նաև արիասիրտ հայուհին՝ Մայան։ Մայայի դպրոցական ընկերուհի Շուրա Դուբրովինան, որն այդ կազմակերպության անդամն էր, նրա մասին իր հիշողություններում գրել է. «Մայայի գալը թարմացնում էր իմ խուցը, ես կրկին աշխուժանում էի, Մայան ջահել, փոթոր-

կալից հեղեղ էր։ Կարծես թե նրա համար հոգնածություն չկար։ Նա միշտ, անընդհատ շարժումների ու ճառերի մեջ էր, իր քնքուշ վարդագույն թշերով և փայլուն աչքերով»[1]։

Հիտլերականները չարանենգորեն սպանեցին իրենց ձեռքն ընկած «Երիտասարդ գվարդիայի» հերոս կոմերիտականներին։ Երիտասարդ գվարդիականները հանդես բերեցին մեծ հայրենասիրություն, հոգու մեծություն, արիություն և մինչև վերջին շունչը մնացին անդրդվելի՝ նվիրված կոմունիստական վեհ գաղափարներին, Սովետական Հայրենիքին։

Մայան իր ընկերների հետ միասին հերոսությամբ տարավ բոլոր տանջանքները և իր երիտասարդ կյանքը զոհաբերեց սովետական ժողովրդի ազատագրության և պայծառ ապագայի համար։

«Երիտասարդ գվարդիայի» զոհված և կենդանի մնացած անդամները բարձր պատվի արժանացան։ Կրասնոդոնի ազատագրումից անմիջապես հետո ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը 1943 թ. սեպտեմբերի 13-ի հրամանով, գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված պայքարում ցուցաբերած խիզախության ու արիության համար մի մեծ խմբի պարգևատրեց մարտական շքանշաններով։ Պարգևատրվածներից հինգ հոգի հետմահու արժանացան Սովետական Միության Հերոսի բարձր կոչմանը։ Հետմահու «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշանով պարգևատրվեց նաև Մայա Պեգլիվանովան (Փոհլևանյանը)[2]։

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 89, տե՛ս Վ. Լյուսկովսկու «Կրասնոդոնի հայ հերոսուհին» հոդվածը։

[2] Մայա Պեգլիվանովայի մասին մանրամասնությունները տես Ռ. Աթայանի «Մայա» աշխատությունը, Հայպետհրատ, Երևան, 1952։

Սիմֆերոպոլ քաղաքում օտարերկրյա զավթիչների դեմ մղվող պարտիզանական պայքարին ակտիվ մասնակցություն է ունեցել զարտաղցի Հրանուշ Մխիթարյանը: Չնայած գեստապոյի հետապնդումներին, նա գաղտնի թռուցիկներ էր տարածում և պայթուցիկ նյութեր մատակարարում տեղի պարտիզանական ջոկատին: Մխիթարյանը մասնակցում է պարտիզանական ջոկատի կողմից գերմանական երեք գնացքի և մի կամուրջի խորտակման մարտական առաջադրանքների կատարմանը:

1942 թվականի ամռանը Կովկասի պաշտպանության լարված օրերին՝ Հյուսիսային Կովկասի պարտիզանների շարքերում էր գործում Կոմունիստական պարտիայի անդամ, կիրովաբադցի Անահիտ Շահնազարյանը: Նա բարձրարկած լեռներում, խոր կիրճերում և դժվար անցանելի անտառներում՝ ձմռան դաժան պայմաններում, հարյուրավոր կիլոմետր տարածություն կտրելով կատարել է մարտական շատ առաջադրանքներ: Մասնակցել է թշնամու զորքերի և տեխնիկայի շարժման ճանապարհներն ականապատելու, կամուրջների և ռազմամթերքների պահեստները պայթեցնելու դիվերսիոն աշխատանքներին: Կովկասի հողում նրա դնդակից մահ են գտել բազմաթիվ հիտլերյան զավթիչներ:

Շատ հերոսներ են զոհվել պարտիզանական պայքարում, բայց, դժբախտաբար, նրանց անունները առայժմ մեզ անհայտ են: Կովկասյան լեռներում, որպես պարտիզան, մարտնչել է 17-ամյա մի հայուհի: Ահա նրա մասին մեր ունեցած կցկտուր տեղեկությունները:

Սովետական ռազմիկները Հյուսիսային Կովկասի բնակավայրերից մեկը գրավելուց հետո կենտրոնական շենքի ճակատին նկատում են ալ դրոշ, Նրանք անմիջապես հետաքրքրվում են, թե ո՞վ է եղել այն քաջը, որ թշնամու կրակի տակ շտապել է կախել այն: Նրանք

հուզված վազում են դեպի դրոշը և անմիջապես կանգ են առնում... դրոշակի տակ ընկած էր զինվորական համազգեստով մի ջահել աղջիկ, որին թշնամու ավտոմատի կրակը խոցել էր մի քանի տեղից։ Դա քաջ պարտիզան, երիտասարդ մի հայուհի էր..., որն ալ դրոշը ձեռքին եկել էր դիմավորելու իր մարտական ընկերներին, բայց թշնամու գնդակը հանգցրել էր նրա ծաղիկ կյանքը։

Մարտիկներն անվախ հայուհու ծոցատետրում գտնում են կիսավարտ, արյունոտված, տեղ-տեղ անընթեռնելի մի նամակ, որտեղ գրված էր. «Սիրելի Վաչե, հազար-հազար սպանի... Դու խոստացար հաղթությամբ... փոքրիկ Աշխենին, որին դու այնքան սիր... Ֆաշիստանելը խեղդամահ... Դու մենակ չես, ես էլ քեզ հետ վրեժի եմ գնում, վրեժ եմ լս.... ազատության համար մեռնելը երջանկու...»[1]։

Հայ ժողովրդի զավակներից շատերը, որոնց թվում շատ կանայք և աղջիկներ, ֆաշիստական օկուպանտների դեմ պայքարել են նաև արտասահմանում։ Դրանցից մեկն էլ հայ ու բուլղար ժողովուրդների պարծանք Հերմինե Ռազկրատյանն է (Սաշկան)։

Հերմինեն ծնվել է 1926 թվականի մայիսի 15-ին Սոֆիայում, ուսուցչի ընտանիքում։ 1937 թվականին Հերմինեն ավարտում է տեղի նախակրթարանը, բայց տնտեսական վատ պայմանների հետևանքով հայրն ստիպված է լինում նրան տալ կոշկակարի աշակերտ։ 12-ամյա Հերմինեն իր համեստ աշխատանքով արդեն օգնում էր ծնողներին։ Նա շուտով ընդգրկվում է բանվորական շարժման մեջ։ 1940 թվականին դառնում է Սոֆիայի ուսուցչուհիների երիտասարդական կազմակերպության «Սվոբոդա» («Ազատություն») ակումբի անդամ

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 80, տե՛ս Աբաբի «Բոցեղեն սիրտ» հոդվածը, էջ 5։

և նվիրվում աշխատավոր ժողովրդի ազատագրության գործին։

1942 թ. Հերմինեն արդեն ակտիվ կերպով ընդգրկվում է հակաֆաշիստական պայքարի մեջ, անվախ կերպով կոչեր ու թռուցիկներ է տարածում հիտլերյան օկուպանտների դեմ, օժանդակում Կարմիր Բանակի հաղթանակի գործին։

Հերմինեն խոր հավատով էր լցված դեպի Կարմիր Բանակի հաղթանակը. «...Երբ օր մը ըսի իրեն,— պատմել է Հերմինեի մայրը աղջկա հետ ունեցած զրույցի մասին,— թե գործերը վատ կերթա, որ այսօր ռադիոն հայտնեց, թե գերմանացիք շարք մը քաղաքներ են առած և ռուսները կնահանջեն, ան ժպտաց ու ըսավ.— Մի վհատիր, մայրիկ, Կարմիր Բանակը կնահանջե, բայց երբեք չի պարտվիր։ Վերջ ի վերջո ռուսները պիտի մաքրեն ֆաշիստների հաշիվը և պիտի տեսնաս, հոս ալ պիտի գան, մեզի ալ ազատելու»[1]։

1943 թ. հունվարի 16-ին Հերմինե Ռազկրատյանը մտնում է Ստարա Պլանինայի լեռներում գործող «Զավդարյ» անունը կրող Սոֆիայի առաջին պարտիզանական ջոկատի մեջ։ Մի տարի անընդհատ հայուհին, հրացանն ուսին, կիսաքաղց, դժվարին պայմաններում, շրջում է լեռներում ու անտառներում և կատարում հետախուզական առաջադրանքներ։

1944 թ. հունիսի սկզբին Էտրոպոլեից ոչ շատ հեռու գտնվող սարերի վրա, պարտիզանական կռիվներից մեկում Հերմինեն կորցնելով իր ընկերներին, դերվում է ֆաշիստների կողմից։ Երիտասարդ հայրենասիրուհուն գեստապոյականները 15 օր շարունակ տանջանքների են ենթարկում, սակայն ոչ մի տեղեկություն չկորզելով նրանից, հունիսի 10-ին գազանաբար սպանում են։

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 1, էջ 29։

Աղատագրված բուլգար ժողովուրդը բարձր է պահում ֆաշիզմի դեմ մղված մարտերում հերոսի մահով ընկած Հերմինեի հիշատակը։

«Այո, Սաշկան (Հերմինե Ռազկրատլյանի ծածկանունն է) մեռած է, բայց նա ապրում է սրտերի, մըտքերի և հոգիների մեջ,— գրել է Բուլգարիայում լույս տեսնող «Երևան» առաջադիմական թերթը,— անմահացած Սաշկան դրոշ է հակաֆաշիստական երիտասարդության համար։ Նա պայքարի կոչ է, մարտի երգ, հավիտենական դարձնի դաղափար, լույս է, առաջնորդող և պերճախոս օրինակ զոհաբերումի։ Ու միևնույն ժամանակ այնքան պարզ է որպես իր կոչումին գիտակից մարդ, պարզ իր կյանքով, պարզ իր պայքարով ու պարզ նաև իր համեստ ու հերոսական մահով։ Ու անոր հիշատակը ջերմությամբ կլցնե մեր սրտերը, կպնվացնե զանոնք»[1]։

* * *

Սիլյուքահայ մտավորականներից շատերը կանգնել էին ճիշտ ուղու վրա։ Նրանք հայ ժողովրդի և Հայաստանի ապագան կապում էին Սովետական Միության հզորացման և բարգավաճման հետ։ Նրանցից շատերը զինվորագրվեցին Կոմունիստական պարտիային, պայքարեցին ֆաշիստական օկուպանտների դեմ հանուն ազգային անկախության ու ազատության։

Սիլյուքահայ առաջադեմ մտավորականներից է կոմունիստ Լուիզա Սալանյանը, գրական ծածկանունը Լաս, որը մինչև կյանքի վերջը պայքարեց և հանուն այդ պայքարի երիտասարդ հասակում զոհվեց։

Լուիզա Սալանյանը 17 տարեկան հասակում (1923) Իրանից տեղափոխվում է Փարիզ ուսումը շարունակելու անենչով։

[1] «Սովետական Հայաստան», 7 հոկտեմբերի 1945։

Մելինե Մանուշյան

Լուիզա Ասլանյան (Լաս)

ՀԱՅԿ ՏՆՏՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ.

Սակայն շատ շուտով բախվելով մեծ քաղաքի կյանքի դժվարություններին, նա հրաժարվում է իր փայլփլած երազանքից և նվիրվում է գրականության:

Նա գրական ստեղծագործության հետ միասին հասարակական ակտիվ գործունեություն է ծավալում հայկական շրջաններում և պրոպագանդում Սովետական Միության և վերածնված հայրենիքի մեծ նվաճումները:

1936 թ. Լ. Ասլանյանը ընդունվում է Ֆրանսիայի Կոմունիստական պարտիայի շարքերը: Խոսքի ուժը միացնելով գործի խանդավառության հետ, նա անխոնջ եռանդով պայքարում է աշխատավոր ժողովրդի ազատագրման համար:

Նա հանդես է գալիս մամուլում, հրապարակային ելույթներ է ունենում, պրոպագանդում է սովետական երկրի տնտեսական, գիտական, կուլտուրական նվաճումները:

1939 թ. հիտլերյան Գերմանիան սանձազերծում է երկրորդ համաշխարհային պատերազմը: Ֆրանսիայի անակնկալ կապիտուլյացիան օրինքից դուրս է հայտարարում Կոմունիստական պարտիան, որը անցնում է ընդհատակ: Կարճ ժամանակ հետո ֆաշիստական բարբարոսները ներխուժում են Ֆրանսիա, ֆրանսիական ազատասեր ժողովուրդը ընկնում է թշնամու ծանր լծի տակ: Ստեղծված մռայլ պայմանները Լուիզա Ասլանյանին չեն ընկճում, նա նոր եռանդով գործի է լծվում և համագործակցելով ֆրանսիացի կոմունիստ ընկերների հետ, հայկական դիմադրության (Ռեզիստանս) շարքերում (որի ղեկավարներից մեկն էր հանդիսանում նա), մարտնչում է հիտլերյան զավթիչների դեմ՝ Ֆրանսիայի ազատագրության համար:

Նա միաժամանակ մասնակցություն է ունենում ընդհատակյա գրականության տպագրության ու նրա տարածման գործին:

Հիտլերյան բռնակալների սովետական հայրենիքի վրա հարձակվելը Ասլանյանին տոգորում են պայքարի նոր լիցքով, որովհետև նա հաստատ համոզված էր, որ սովետական ժողովուրդը կջախջախի ֆաշիզմի ողնաշարը և, որի շնորհիվ էլ, տատապող մարդկությունը կազատագրվի հիտլերյան զավթիչներից։

Այն ժամանակ, երբ սովետական զորքերը հարվածներ էին հասցնում ֆաշիստական ջարդարարներին, Ֆրանսիայում հակաֆաշիստական շարժումը լայն թափ էր ստացել, Փարիզի ազատագրման խնդիրը օրերի հարց էր, որին չարժանացավ ազատության մարտիկ Լուիզա Ասլանյանը։ 1944 թ. հուլիսի 14-ին ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի տարելիցի օրը, դեստապոյի ճիվաղները, ստոր մատնիչների աջակցությամբ, ձերբակալում են Ասլանյանին և գցում հիտլերյան ճամբարներից մեկը։

Ճամբարային բոլոր զրկանքներն ու խոշտանգումները նա տանում է արիությամբ և երբեք չի հրաժարվում իր համոզմունքներից։ Նա մահվան աչքերին նայում է արհամարհանքով։ Մարդու համար անտանելի այդ դժոխային պայմաններում անգամ, նա վայր չի դնում իր գրիչը։ Սկսում է գրել մի վեպ (որից, դժբախտաբար, պատառիկներ են հասել), որտեղ ռևոլյուցիային նվիրված մարտիկը վառ ու գրավիչ գույներով նկարագրում է այն պայծառ գալիքը, որի համար շատերի հետ ինքն էլ պիտի զոհվի։

Ազատության համար զոհվելը նա համարում էր երջանկություն, քանի որ մի օր «երբ տոնվի ազատության հաղթանակը» և նշվի «բանտերի մեջ մնած, բռնված ու դնդակահարված հերոսների» հիշատակը, ապա ինքը նրանց մեջ կլինի։

Լուիզա Ասլանյանը մեռնում է բանտում, դապի կամերայում հեղձամահ լինելով, առանց տեսնելու հաղ-

թանակի ցնծալի արշալույսը։ Նա իր գործունեությամբ և հերոսական մահով թողել է այնպիսի մի հիշատակ, որը առաջավոր մարդկանց հիշողության մեջ կապրի հավերժ։

* * *

Ֆրանսիական դիմադրության ներքին ուժերի շարքում մարտնչում էր նաև Մելինե Մանուշյանը, Ֆրանսահայ լեգենդար հերոս, հակաֆաշիստական պայքարի կազմակերպիչ, Ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատների հրամանատար Միսաք Մանուշյանի կյանքի ու պայքարի ընկերուհին։

Մելինե Մանուշյանը ծնվել է 1913 թ. Կոստանդնուպոլսում։ Առաջին համաշխարհային պատերազմում կորցնելով ծնողներին՝ նա փոխադրվում է Ֆրանսիա, որտեղ 1926 թ. ընդունվում է դպրոցական տիկնանց վարժարանը և հաջողությամբ ավարտում նրա լրիվ դասընթացը։

1932 թ. նա սկսում է մասնակցել ՀՕԿ-ի աշխատանքներին, իսկ երբ հիմնադրվում է առաջադիմական «Ֆրանսահայ ժողովրդական միությունը» (1938), Մելինեն դառնում է նրա կենտրոնական վարչության անդամ և միաժամանակ կատարում քարտուղարի պարտականությունները։

1939 թ. սկսվում է երկրորդ համաշխարհային պատերազմը։ Գերմանո-ֆաշիստական զորքերը օկուպացնում են Փարիզը։ Այդ ժամանակվանից Մելինեն ֆրանսահայ կոմունիստների հետ միասին անցնում է ընդհատակյա գործունեության։ Նա նշանակվում է գաղտնի գրականություն տարածող պատասխանատու աշխատող, Փարիզի պատերին փակցնում է հակաֆաշիստական աֆիշներ, թռուցիկներ և կոչեր։

Երկրում ծալլը է առնում պարտիզանական շարժումը: 1942 թ. վերջերին Միսաք Մանուշյանի հրամանատարությամբ պարտիզանական ջոկատ է կազմակերպվում նաև հայ երիտասարդներից, Մելինեն դառնում է նրա անձնական քարտուղարը: Նա հետագայում նույն պարտականությունն է կատարում նաև պարտիզանական «Ինտերնացիոնալ» ջոկատում: Այստեղ Մելինեն կապ է հաստատում պարտիզանական ջոկատների միջև, մասնակցում զենքի ու ռազմամթերքի փոխադրմանը, գրի է առնում պարտիզանական գործողությունների օրագիրը, կազմում է հաշվետվություններ[1]:

Միջոց պարտիզանուհի Մելինեի գործունեությունը բարձր է գնահատվում Ֆրանսիայի դիմադրության ներքին ուժերի հրամանատարության կողմից, որը նրան շնորհում է կապիտանի կոչում:

1943 թ. նոյեմբերի 16-ին գեստապոյի կողմից ձերբակալվում է Մելինեի մարտական ընկեր Միսաք Մանուշյանը և 1944 թ. փետրվարի 21-ին գնդակահարվում: Մելինեն անսահման վրեժի ցասումով լցված, կրկնապատկում է իր պայքարը ֆաշիստական օկուպանտների դեմ, կապ է հաստատում Ֆրանսիայում տեղավորված սովետական ռազմագերիների, հատկապես հայ ռազմագերիների հետ և անխոնջորեն օժանդակում նրանց փախուստին և պարտիզանական շարժման մեջ ներգրավելու գործողություններին:

1945 թ. սեպտեմբերին Մելինե Մանուշյանը փոխադրվում է Սովետական Հայաստան և իր ամբողջ էներգիան նվիրում մեր երկրում կոմունիզմի կառուցման մեծ ու վսեմ գործին:

---

[1] Տե՛ս Ն. Խալեյան, «Նյութեր Միսաք Մանուշյանի մասին» հոդվածը, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների բաժանմունքի, 1946, № 4, էջ 74—82:

* * *

Սովետական Միության Հայրենական պատերազմն ավարտվեց փայլուն հաղթանակով։ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ղեկավարությամբ Կարմիր Բանակը պատմական մեծագույն հաղթանակ տարավ գերմանական զավթիչների դեմ և ապահովեց մեր երկրի ազատությունն ու անկախությունը, Եվրոպայի ու Ասիայի ժողովուրդներին փրկեց ֆաշիստական ստրկացման սպառնալիքից։

Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում սովետական կանայք, նրանց շարքերում նաև Հայաստանի դուստրերը, թե ռազմաճակատում և թե թիկունքում ակտիվորեն մասնակցելով Հայրենիքի պաշտպանությանը, սովետական ժողովրդի ազատության ու անկախության համար մղված համաժողովրդական պայքարին, անթառամ փառքով պսակեցին սովետական կնոջ պատիվն ու բարձր կոչումը, բազմապատկեցին նրա փառքը։

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԻԶԱ ՎԱՍԻԼԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ЛИЗА ВАСИЛЬЕВНА МАРТИРОСЯН

**Հայ կանանց սխրագործությունները
Հայրենական Մեծ պատերազմի
ռազմաճակատներում**

*Պատ. խմբագիր՝ Ն. Մ. ԽԱԼԵՅԱՆ
Հրատ. խմբագիր՝ Ռ. Խ. ՄԱՆՈՅԱՆ
Նկարչական ձևավորումը՝ Ռ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
Տեխն. խմբագիր՝ Գ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
Սրբագրիչ՝ Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ*

ՎՖ 00413, պատվեր 218, ԽՀԽ 608, հրատ. 1838, տիրաժ 2000

---

*Հանձնված է արտադրության 1/X 1960 թ., ստորագրված է տպագրության 1/II 1961 թ.։ Թուղթ 84×108 1/32։
Տպագր. 5,75 մամ. + 7 ներդիր, հրատ. 3,64 մամ.։
Գինը 8 կ.։*

---

*Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան,
Երևան, Բարեկամության 24։*

ՈՒՂՂՈՒՄ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
17	14 ն.	կորենեյբուրգ	կորնեյբուրգ
20	5 վ.	Ֆրեյշտատդ	Ֆրայշտատդ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0019479

Գինը 8 կոպ.

ЦЕНА
А II
7777